

**KOMITAS.CA**  
 COMPLEXE FUNÉRAIRE  
 (514) 331-0400

PRE-ARRANGEMENT 0% INTEREST  
 1, 3, 5, 10 YEAR PAYMENT COVERED BY  
 "ASSURIS" ASSURANT LIFE OF CANADA

## Երեւանի պահանջատիրական ջահերթին մասնակցեցան հազարավոր հայորդիներ



Կարդալ էջ 7

### Վարչապետ Թրուտոյի յայտարարութիւնը Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակին առթիւ

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտո յատուկ յայտարարութեամբ յիշատակեց Հայոց ցեղասպանութեան 102-ամեակը, ուր յատկապէս կ'ըսէ «2015-ին, Գանատայի խորհրդարանը միաձայնութեամբ որդեգրեց բանաձեւ մը, որ 24 Ապրիլը կը հռչակէ Հայոց ցեղասպանութեան յիշատակման օր»:

Այս օրը կը յարգէ յիշատակը անոնց, որոնք ցեղասպանութեան ընթացքին անարդարօրէն կորսնցուցին իրենց կեանքը եւ տառապեցան: Յարգանքի տուրք կը մատուցենք անոնց եւ անոնց ժառանգորդներուն, որոնցմէ շատեր ներկայիս կը բնակին Գանատա: Այս առիթով՝ գանատացիները, անկախ անոնց կրօնքէն կամ ազգային ծագումէն, հանդիսաւոր յիշողութեամբ եւ վերահաստատ նուիրումով միասնաբար կը կանգնին՝ ապահովելու համար, որ երբեք անտարբեր պիտի չմնանք որեւէ ձեւի ատելութեան կամ բռնարարքի նկատմամբ:

### Չեխիան ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Չեխիոյ խորհրդարանը 25 ապրիլին տեղի ունեցած նիստին ձայներու 104 կողմ, 0 դէմ, 0 ձեռնպահ յարաբերակցութեամբ (96 երեսփոխաններ չեն քուէարկած) ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ: Բանաձեւին մէջ նշուած է. «Չեխիոյ խորհրդարանի պատգամաւորներու տունը կը դատապարտէ Համաշխարհային Բ. պատերազմին ընթացքին նացիներու կողմէ գրաւուած տարածքներուն մէջ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւնները հրեաներու, գնչուներու եւ սլաւոններու նկատմամբ, Համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին՝ հայերու ցեղասպանութիւնը եւ ազգային ու կրօնական այլ փոքրամասնութիւններու ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութեան տարածքին մէջ»:

### Գանատահայութիւնը պահանջատիրութեան իր ճայնը բարձրացուց Օթթաուայի մէջ



Կարդալ էջ 5

(Լուսանկարը՝ Իշխան Ղազարեանի)

**2017**  
**HR-V**  
 STARTING FROM  
**\$20,950\***

**HONDA**  
**GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
 Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
 www.hondagabriel.com  
 < OPEN SATURDAYS >

**HONDA**

\*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



2173 Ste-Catherine O,  
Montréal, QC H3H 1M9  
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,  
Laval, QC H7T 1R3  
(450) 978-2333

8880 boul. Leduc,  
Brossard, QC J4Y 0G4  
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,  
Anjou, QC H1M 2T5  
(514) 493-6667

2001 Sauvé O,  
Montréal, QC H4N 3L6  
(514) 382-8606

4601 boul. Des Sources,  
Roxboro, QC H8Y 3C5  
(514) 685-5050

3100 boul. Thimens,  
Montréal, QC H4R 0C9  
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,  
Laval, QC H7E 0H3  
(450) 665-8801

225 Rue Peel  
Montréal, QC H3C2G6  
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,  
Mississauga, ON L5V 1N3  
(905) 363-0707

20 Ashtonbee Road  
Scarborough, ON M1L 4R5  
(416) 642-1515

[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca)

Suivez-nous !



# **ANI BAKERY**

## **ԱՆԻ ՓՈՒԳՊԱՆ**

### **Middle Eastern Pizza Lahmajoun**

#### **Սեփականատեր՝ Արսեն Տապապաղեան**

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ  
գոհ պիտի մնաք**



**NEW ADDRESS FROM JANUARY 2016**

**Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164**

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00  
(Երկուշաբթի փակ)

# Հայ երիտասարդներ Վանգուվրի մէջ պահանջատիրական երթ կազմակերպեցին

Ապրիլ 24-ին, Վանգուվրի ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան (ԳԵՄ) «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի կազմակերպութեամբ կայացաւ բողոքի հաւաք Ռոպպըն հրապարակին վրայ: ԳԵՄ-ի անդամները թուրքիոյ պետութեան ուրացման քաղաքականութիւնը դատապարտող պատաներ բարձրացուցին եւ պահանջատիրութեան իրենց խօսքը բարձրախօսով սփռեցին:

Կիրակի, 23 Ապրիլ 2017-ին, ողջ վանգուվրահայութիւնը հաւաքուած էր Վանգուվրի Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշակոթողի կողքին գտնուող «Mountain View» գերեզմանատան դահլիճին մէջ, ոգեկոչելու 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան 1.5 միլիոն սրբադասուած զոհերուն յիշատակը, կազմակերպութեամբ Պրիթիշ Գոյոմպիոյ Հայկական Միացեալ յանձնախումբին:

Միասնական պատարագ տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Վարդան Հայաստանայց Առաքելական եկեղեցիներուն կողմէ, պատարագիչ ունենալով Հայր Հրանդ Վարդապետ Թահանեան, իսկ քարոզիչ՝ Տէր Գեղարդ Աւագ Քահանայ Կարապետեանը: Ձեռնարկին բեմավարն էր ընկեր Օհան Կիւրէղեանը:

Այս առիթով երեք երիտասարդ գանատահայեր, մէկը Գանատա ծնած, միւսը վերջերս Սուրիայէն Գանատա հաստատուած եւ վերջինը Մեքսիքայէն, պատմեցին իրենց զգացմունքները՝ Հայոց ցեղասպանութեան եւ այն դժուարութիւններուն մասին, զորս դիմադրուած էին պահպանելու իրենց հայ մշակոյթն ու ինքնութիւնը:

Գեղարուեստական յայտագրով հանդէս եկան Ս. Վարդան Հայաստանայց Առաքելական եկեղեցւոյ «Ներսէս Շնորհալի» եւ ՀՕՄ-ի «Արագ» վարժա-



րանի աշակերտ-աշակերտուհիները՝ անհատական արտասանութիւններով եւ խմբային ազգագրական երգերով:

Յիշատակումի այս հաւաքին ներկայ էին հայ ժողովուրդի արդար դատին հաւատացող գանատացի քաղաքական դէմքեր, որոնք ծաղիկներ գետեղեցին ցեղասպանութեան յուշարձանին առջեւ՝ առ ի յարգանք մէկուկէս միլիոն զոհերու յիշատակին եւ իրենց զօրակցութիւնը յայտնեցին համայն հայութեան:

Յատկանշական էր քաղաքապետի տեղակալ եւ քաղաքային խորհուրդի

անդամ Geoff Meggs-ի ներկայութիւնը, որ կարգաց Վանգուվր քաղաքի հռչակագիրը ցեղասպանութեան առնչութեամբ:

Ապա խօսք առաւ Պրիթիշ Գոյոմպիոյ Օրէնդիր Մարմնի անդամ Adrian Dix, որ իր խօսքին մէջ ըսաւ, թէ հպարտ է բաժնեկից դառնալու Վանգուվրի հայ գաղութին եւ Հայ Դատի յանձնախումբին տարած աշխատանքներուն եւ ինքզինքը կը սեպէ հայ ընտանիքի մէկ անդամ ու կը հաւատայ, որ մեր աշխատանքները պիտի շարունակուին: Ան

նաեւ անդրադարձաւ ցեղասպանութեան մասին դպրոցներու մէջ ուսուցման եւ Արցախի Հանրապետութեան իրաւունքներու ինքնորոշման կարեւորութեանց մասին:

Իսկ քաղաքապետարանի անդամ Hedy Fry ներկայացուց Գանատայի կառավարութեան եւ վարչապետ Justin Trudeau-ի խօսքը:

Ձեռնարկը վերջ գտաւ միասնական աղօթքով:

Մեղրիկ Սիլվաբեան Զափանեան

Հորիզոն www.horizonweekly.ca

HAIG AFARIAN
Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com
Charisma FINANCE
3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Albert Arkilanian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilanian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

NISSAN GABRIEL
VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS
HONDA GABRIEL
Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite AZIG Driving School
Tel: 514-336-1110
Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant
nat.skaff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7
Services available in Armenian, Arabic, English and French

NAZARETH CLASSIC GRILL
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN 450 682-1644
AUTO SAMSON
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX
ՀԱՅԿ ԳԱՐՅՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL)
2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

# Գանատահայությունը պահանջատիրության իր ճայնը բարձրացուց Օթթաուայի մէջ



(Լուսանկարները Իշխան դազարեանի)

Ապրիլ 24, 2017-ին, Թորոնթոյն, Գէմպրիճէն, Լաւալէն, Մոնթրէալէն, Համիլթոնէն, Սէնթ աթրինգէն եւ այլ վայրերէ Օթթաուա ժամանեցին աւելի քան 2000 հայորդիներ եւ Գանատայի խորհրդարանին առջեւ միասնաբար վերանորոգեցին պահանջատիրութեան իրենց ուխտը: Հաւաքին իրենց պետական դրօշները պարզած միացան ասորական, եւ ուսանողական եւ պատուիրակութիւններու անդամները, որոնք Օթթաուա ժամանած էին իրենց գորակցութիւնը յայտնելու հայութեան: Հաւաքն ու քայլարշաւը կազմակերպուած էին Գանատայի Հայ դատի յանձնախումբին կողմէ:

Օթթաուայի ոստիկանութիւնը, այս տարի եւս թրջական համայնքի ներկայացուցիչներուն արտոնադիր տուած էր, որպէսզի անոնք Գանատայի Խորհրդարանին դիմաց իրենց հաւաքը կատարեն գրեթէ միեւնոյն պահուն, երբ գանատահայերը կը կատարեն Մեծ Եղեռնի ոգեկոչման ամէնամեայ աւանդական արարողութիւնը: Հայ եւ թուրք համայնքները իրարմէ բաժնուած էին յատուկ անցարգել մետաղեայ պատնէշներով:

Պաշտօնական հանդիսութեան հանդիսավարն էր Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գործավար Սեւակ Պելեան: Հայ Դատի յանձնախումբի խօսքը փոխանցեց Նորա Արուշեան, որ դատապարտեց Յեղասպանութիւնը ժխտելու Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը: Ան յատկապէս շեշտեց, որ Հայոց Յեղասպանութեան զուգահեռ Թուրքիոյ պետութեան կողմէ գործադր-

ուած ատրիներու եւ Փոքր Ասիոյ յոյներու ցեղասպանութիւնները նոյնպէս կանխամտածուած էին:

Խօսք առաւ Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան արն. Արմէն Եգանեան, որ շնորհակալութիւն յայտնեց Գանատայի իշխանութիւններուն, որոնք հայութեան իրաւունքներուն եւ համախարհային առումով մարդկային իրաւանց պաշտպան կը հանդիսանան: Ան նաեւ բուռն կերպով դատապարտեց Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը եւ յայտնեց, թէ նման ուրացումներ կրնան առաջնորդել այլ ցեղասպանութիւններու գործադրման ու անպատեխելութեան: Դեսպանը անդրադարձաւ նաեւ Հրանդ Տինքի սպանութեան 10-րդ տարելիցին, հաստատելով, որ Տինքի ահաբեկումը Հայոց Յեղասպանութեան շարունակութիւնն է:

Իշխող Ազատական կուսակցութեան կողմէ խօսք առաւ Գանատայի արտաքին գործոց նախարարութեան խորհրդարանական քարտուղար Անտրու Լեսլի: Ան ընթերցեց Գանատայի վարչապետ ձասթին Թրուտոյի Հայոց Յեղասպանութեան 102-ամեակի առիթով հրատարակած ուղերձը, ուր վարչապետը կը վերահաստատէ Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելու Գանատայի պետական քաղաքականութիւնը:

Խօսք առաւ նաեւ Ազատական կուսակցութեան խորհրդարանի անդամ Ֆայսալ Խուրի, որ յատկապէս յիշեց ամէն Ապրիլ 24-ին Օթթաուա այցելող հան-

դուցեալ վերապրող Քնար Եմէնիճեանին:

Ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան անունով խօսք առաւ խորհրդարանի անդամ Կարնէթ ձէնիս, որ ներկաներուն յայտնեց, թէ իր մեծ մայրը Հրէական Ողջակիզումի վերապրողներէն եղած է եւ իրեն փոխանցած է հրեայ ժողովուրդի կրած արհաւիրքի պատմութիւնը: Ան յայտնեց, որ Բ. Աշխարհամարտէն ետք Գերմանիան հատուցում կատարեց հրեաներուն, շեշտելով, որ ողջամիտ արարք պիտի ըլլար Թուրքիոյ հետեւելու Գերմանիոյ օրինակին եւ արդար հատուցում կատարելու հայ ժողովուրդին:

Նոր Դեմոկրատ կուսակցութեան կողմէ հայ ժողովուրդին գորակցութեան խօսք արտասանեց խորհրդարանի անդամ Ալեքսանտր Պուլրիս, որ իր խօսքը եզրափակեց ըսելով, որ Ապրիլ 24-ը ճշմարտութեան յղթանակակի օրը պէտք է դառնայ:

Ելոյթ ունեցան նաեւ նաեւ Իսրայէլի եւ Հրէական Հարցերու Կեդրոնի տնօրէն Ռիշար Մարսօ, Հելլէնական-գանատական Գոնկրէսի նախագահ Թէոտոր Հալատիս, Ռուսաստանի Կրտսէր Գրոտ Նկպոնցիզա եւ Գանատայի Ասորի Երիտասարդութեան կողմէ Ռոզմարի Եաչուհ, որոնք հաստատեցին յոյն, հրեայ, ուսանողացի եւ ասորի ժողովուրդներու գորակցութիւնը հայութեան դատին, շեշտելով, որ անցեալի ցեղասպանութեանց ուրացումները կ'առաջնորդեն նոր ցեղասպանութիւններու:

Խորհրդարանի դիմաց հաւաքի աւարտէն ետք աւելի քան 2000 հայորդիներ ուղղուեցան դէպի թրջական դեսպանատուն, ուր 150-200 թուրք ցուցարարները, հակահայ պատաստներով կանգնած էին: Ոստիկաններու ստուար թիւ մը եւ անցարգել պատնէշներ կը բաժնէին ցուցարար երկու կողմերը: Հակառակ թրջական կողմի գրգռիչ փորձերուն, հայկական կողմը շարունակեց դեսպանատան դիմաց ոգեկոչման արարողութիւնը, որու ընթացքին ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան (ԳԵՄ) կազմակերպութեամբ գործադրուեցաւ յատուկ յայտագիր, որու ընթացքին հայ երիտասարդները հաստատեցին պահանջատիրական երթը շարունակելու նոր սերունդի վճռակամութիւնը: Միաժամանակ, սիրուած երգիչ Էլի Պէրպէրեան խանդավառեց հայ ցուցարարները:

Նշենք, որ առաւօտեան, Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւն այցելեցին ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութիւնը, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, որոնք Առաջնորդ սրբազան Աբգար Եպս. Յովակիմեանի, Առաջնորդ սրբազան Բաբգէն Արք. Չարեանի եւ դեսպան Արմէն Եգանեանի հետ, դեսպանատան «Յաւերժական Հայաստան» յուշարձանին մօտ աղօթքով ոգեկոչեցին Մեծ Եղեռնի 100-ամեակը: Նշենք, որ առաջին անգամ ըլլալով այս արարողութեան ներկայ գտնուեցաւ Օթթաուայի քաղաքապետ Ճիմ Ուաթսըն:

# Ծպտեալ Կամ Իսլամացում Հայերի Վիճակը Թուրքիայում



Անցեալ տարի «Վերածնունդ» հիմնադրամը Դիարբեքիրի, Ուրֆայի, Տերսիմի, Վանի եւ Համշենի ծպտեալ, իսլամացում հայերի համար զբօսայցի էր կազմակերպել դէպի Հայաստան, որպէսզի օգնի նրանց վերագտնելու իրենց արմատները, լեզուն, մշակոյթն ու պատմութիւնը:

Թուում է՝ տանամակներ են անցել, մինչդեռ անցեալ տարուայ Ապրիլին էր, երբ Յեղասպանութեան գոհերի ոգեկոչման համար դաշնամուրի համերգ տեղի ունեցաւ Դիարբեքիրի վերջերս վերակառուցուած Ս. Կիրակոս եկեղեցում: Համերգն ունկնդրեցին հազար հոգուց աւելի ծպտեալ հայեր:

Դիարբեքիրի ծպտեալ հայերի ամէնամսեայ նախաճաշերը Ս. Կիրակոս եկեղեցում այլեւս հեռուոր յիշողութիւն են դարձել: Իսկ հայոց լեզուի դասերը, որոնց խանդավառութեամբ մասնակցում էին Դիարբեքիրի եւ Դերսիմի իսլամացում հայերը, վաղուց դադարեցուցել են:

Հանդիսանալով դէպի Հայաստան շրջայցերի կազմակերպիչ՝ ինձ համար ուրախալի էր ստանալ էլեկտրոնային նամակներ այդ ծպտեալ հայերից, որոնք այլեւս դադարել են թաքցնել իրենց ինքնութիւնը:

«Նախքան Հայաստան գնալս ես քուրդ էի, վերադարձայ որպէս հայ», կարդում ենք այդ նամակներից մէկում: «Տարիներ շարունակ ես պայքարում էի քրդերի իրաւունքների համար, մինչեւ որ հայրս մահուան մահճում ասաց, որ հայ եմ: Հիմա ուզում եմ կուռել Արցախում (Լեռնային Ղարաբաղում-ԼՂՀ)», կարդում ենք միւսում: Կրկնակի ուրախալի էր տեսնել, թէ ինչպէս դիարբեքիրի երիտասարդները, որոնք համայնարան էին յաճախում Երեւանում, զբօսաշրջիկերի համար զբօսավար էին հանդիսանում: Հաճելիօրէն գարմանալի էր, որ վերջին զբօսայցի ավարտուեց համաշխարհային զինուորական ծառայողի միջոցով: Այնուհետեւ ամբողջովին քանդել էին այդ վնասուած շինութիւնները՝ ստեղծելով քաղաքային շրջաններում ընդարձակ տարածքներ, որտեղ կանգուն էին մնացել լոկ մի քանի մզկիթ, ոստիկանական բաժանմունք կամ էլ քաղաքապետարանի շէնքը:

Մեծ թուով ծպտեալ հայեր Թուրքիայում սկսել էին միմեանց հետ շփուել, կապեր հաստատել Հայաստանի եւ Սփիւքի հայերի հետ:

Իսկ հիմա՞: Անցեալ տարին դժոխք էր Թուրքիայի ծպտեալ հայերի համար: Քիւրդ գիւնեալների եւ Թուրքական բանակի միջեւ մղուող քաղաքացիական պատերազմն ավարտուեց Թուրքիայի հարաւ-արեւելեան եւ արեւելեան շրջանների մասսայական աւերածութիւններով: Թուրքական բանակի եւ ոստիկանութեան սպաները պայթեցրել կամ կրակի էին մատնել տարածաշրջանի շինութիւնների մեծ մասը: Այնուհետեւ ամբողջովին քանդել էին այդ վնասուած շինութիւնները՝ ստեղծելով քաղաքային շրջաններում ընդարձակ տարածքներ, որտեղ կանգուն էին մնացել լոկ մի քանի մզկիթ, ոստիկանական բաժանմունք կամ էլ քաղաքապետարանի շէնքը:

Ամբողջական թաղամասեր են անհետացել՝ վերածուելով քարակոյտերի: Ս. Կիրակոս եկեղեցին յարաբերականորէն անվնաս է մնացել. շարդուել են միայն պատուհաններն, ու դրսի պատերից մէկի վրայ մեծ անցք է բացուել: Սակայն Թուրքական անվտանգութեան ուժերը եկեղեցին օգտագործել են որպէս ռազմաբազա, պղծել այն, որպէս վառելափայտ՝ այրել եկեղեցու որոշ նստարաններ, ամէնուրեք թողնելով աղբ ու մեզի գարշահոտ: Եկեղեցուն կից յուշանուէրների խանութն աւերել են:

Եկեղեցու յարակից մի քանի խանութն ու տունը, որոնք ի սկզբանէ պատկանել էին եկեղեցուն, եւ որոնց սեփականութեան իրաւունքը երկարատեւ բանակցութիւններից յետոյ միայն վերջերս էին վերադարձրել եկեղեցուն, բազմաթիւ պատմական նեղ փողոցների ու շէնքերի հետ միասին քանդուել են կառավարութեան նախաձեռնութեամբ:

Ներկայում եկեղեցին ընդարձակ բաց տարածութեան մէջտեղում է, սակայն ամենավատն այն է, որ 2016թ. Մարտին Թուրքիայի կառավարութիւնը օրէնք ընդունեց, համաձայն որի՝ բռնադրուեց եկեղեցին եւ եկեղեցուն պատկանող ողջ ունեցուածքը: Եկեղեցին այժմ փակ է հանրութեան համար: Հայկական եկեղեցու հիմնադրամը դիմել է Թուրքական դատարան եւ անբաւարար դատավճռի դէպքում նպատակ ունի դիմելու Մարդու իրաւունքների եւրոպական դատարան:

Տարածաշրջանում աւելի քան մէկ միլիոն մարդ է տեղահանուել՝ ստիպուած լինելով ապաստանել աւելի ապահով վայրերում: Հազարաւոր մարդիկ սպանուել կամ վիրաւորուել են, այդ թուում՝ երեխաներ եւ ծերեր: Կառավարական ուժերի կողմից ռազմածրամեան ժամանակ ոմանք ողջակիզուել են բազմաբնակարան շէնքերի նկուղներում: Հազարաւոր մարդիկ՝ յատկապէս մտաւորականներ, ուսուցիչներ, իրաւաբաններ եւ լրագրողներ, շխատանքից ազատուել, ձերբակալուել եւ բանտարկուել են «քրտական ահաբեկչական կազմակերպութիւնների աջակցելու» հիմնաւորմամբ:

Տարածաշրջանի բազմաթիւ քաղաքների ու աւանների քուրդ քաղաքացիներին, որոնք ընտրուել էին ժողովրդավարական ճանապարհով, հեռացրել են պաշտօններից, ձերբակալել եւ բանտարկել: Ժողովուրդների դեմոկրատական կուսակցութեան առաջնորդներին, ինչպէս նաեւ մի քանի պատգամաւորների եւս ձերբակալել եւ բանտարկել են:

Յուլիսին նախագահ Էրդողանի դէմ ձախողուած յեղաշրջման փորձից յետոյ բռնատիրական ուժերն ու Թուրքիայում յայտարարուած արտակարգ դրութիւնը լուրջին են բոլոր ընդդիմադիրներին՝ ԶԼՄներին, մտաւորականներին ու փորձագէտներին: Իրավիճակը Թուրքիայում մտահոգիչ է եւ գնալով վատանում է յատկապէս Թուրքիայի հարաւ-արեւելեան շրջաններում, ինչպէս Թուրքիայում, այնպէս էլ Իրաքի եւ Սիրիայի

ասհմանին տեղի ունեցող ռազմական գործողութիւնների հետեւանքով: Թէեւ Թուրքիան խոստացել է պայքարել Իսլամական Պետութեան դէմ, սակայն թուում է՝ Թուրքիայի պայքարը հիմնականում ուղղուած է Թուրքիա-Իրաքում եւ Սիրիայում քրտական ուժերի դէմ: Թուրքական բանակը եւ ոստիկանական ուժերը ծաղրում են քիւրդ գիւնեալներին՝ նրանց «հայի ծնունդ» կոչելով:

Մեր ծպտեալ, իսլամացում հայերն արժանացել են նոյն ճակատագրին (միգրացի եւ աւելի վատ), ինչպէս եւ տարածաշրջանի ողջ բնակչութիւնը: Նրանք խտրականութեան են ենթարկուում, անկախ նրանից՝ որտեղ են գնում: Քրդերը խտրականութեան են ենթարկում «իրական» քուրդ չլինելու համար: Թուրքերը նրանց նոյնիսկ աւելի շատ են խտրականութեան ենթարկում եւ հետապնդում, քանի որ նրանց ուղղորդները լուրջին են հայերի դէմ ատելութեամբ եւ վախով, թէ իբր նրանք են Յեղասպանութեան մեղաւորները: Եթէ ծպտեալ, իսլամացում հայերն ընտրում են Ստամբուլ գնալու ճանապարհը, ապա խտրականութեան են ենթարկուում այնտեղի հայերի կողմից: Մինչեւ որ նրանք չեն բաւարարում Ստամբուլի Հայոց պատրիարքարանի անհիմն ու խիստ պահանջները եւ մկրտուում որպէս քրիստոնեաներ, հայ համայնքը նրանց չի ընդունում:

Բնականաբար, «Վերածնունդ» նախագիծը ջանքերը՝ ուղղուած օգնելու ծպտեալ, իսլամացում հայերին՝ վերագտնելու իրենց հայկական արմատները, մշակոյթն ու սովորելու լեզուն՝ կազմակերպելով Տերսիմում եւ Դիարբեքիրում հայոց լեզուի դասընթացներ, ինչպէս նաեւ դէպի Հայաստան զբօսայցիներ դադարեցուցել են:

Փոխարէնը, ներկայում ջանքերն ուղղուած են օգնելու թաքնուած հայերին տեղափոխուել պատերազմական գոտուց հեռու, ապահով վայրեր, ձերբակալուած, կալանաւորուած կամ անարդար աշխատանքից ազատուածներին ապահովել փաստաբաններով:

Այս տարի զգալի յետադիմաց է տեղի ունեցել՝ ուղղորդուած մարդկային տառապանքներով եւ նիւթական կորուստներով: Ներկայում մեր վերահսկողութիւնից դուրս է գտնուում Դիարբեքիրի Ս. Կիրակոս եկեղեցին, որը երկարատեւ ջանքերից յետոյ գեղեցիկ կերպով վերանորոգուել էր, օծուել եւ իր դռները բացել հաւատացեալների առաջ: Բայց պէտք է յիշել, որ եկեղեցին արդէն իսկ ծառայել է իր նպատակին՝ ապահովելով ծպտեալ, իսլամացում հայերի գարթօնքը: Որպէս ձգողութեան կենտրոն՝ այս եկեղեցին համախմբել է ծպտեալ հայերին՝ վերապրածների թուներին, եւ Հայոց Յեղասպանութեան որբերին, ովքեր շարունակում են գոյատեւել եւ ապրել մեր պապենական հողերում թէկուզ եւ՝ ծանր պայմաններում:

«ԱԿՈՒՆՔ»  
ՐԱՖՖԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
Անգլերէնից Թարգմանեց՝  
ԱՆԱՀԻՏ ԲԱՐՏԱԾԵԱՆ

# Մոնթրեալի մէջ Հայոց ցեղասպանութեան 102-ամեակին նուիրուած ձեռնարկ



(Լուսանկարները Մայք Թաշճեանի)

Ուրբաթ, 21 Ապրիլ 2017-ին, Լաւալի Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշարձանին դիմաց տեղի ունեցած Հայոց ցեղասպանութեան յիշատակման պաշտօնական հանդիսութիւն, կազմակերպութեամբ Քեպէզի Հայ Համայնքի Միացեալ մարմինին: Ձեռնարկին ներկայ էին Քեպէզի հայ համայնքի բոլոր կազմակերպութիւններէն ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ կղերականներ եւ մօտ հինգ հարիւր հայրենակիցներ:

Հայ Դատի յանձնախումբին խօսքը փոխանցեց Հրակ Չինչինեան, նշելով թէ այս ձեռնարկով մենք կը փաստենք, թէ թուրքերը չհասան իրենց նպատակին՝ ոչնչացնելու մեր ազգը, բնաջնջելու հայերն ու Հայաստանը: Կա մենք կանք ու կը բազմանանք: Ան շարունակեց,

ըսելով թէ որպէսզի կանխարգիլենք ջարդերը, որպէսզի ուրիշ ազգեր ու ժողովուրդներ չապրին մեր ներկայ իրավիճակը, պէտք է միջազգային դեմքի վրայ դատապարտուի թուրքիան:

Խօսք առին քաղաքական դէմքեր եւս Նասիֆ, Սաուլ Փօլօ, Յարութ Շիթիլեան եւ Լաւալի քաղաքապետ Մարք Տեմերս: Բոլորը նշեցին հայերուն կարեւոր դերակատարութիւնը Քեպէզի հանրային մարզէն ներս եւ յայտնեցին իրենց ցաւակցութիւններն ու զօրակցութիւնը հայերուն եւ Հայ Դատին:

Բեմ բարձրացաւ Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Արմէն Եկանեան: Ան իր խօսքին մէջ նշեց Հայաստանի յառաջիկայի մասին հարցով Գանատայի հայ գաղութին տարած աշխատանքը: Ան շեշտեց, թէ

Թուրքիան պէտք է ընդունի ցեղասպանութիւնը, որպէսզի կարենանք բարելաւել մեր յարաբերութիւնները:

Նոյնպէս խօսք առաւ Հայ Դատի բարեկամ Ժիլ Տէօսէթ, որ անդրադարձաւ 2004 թուականին տարուած այն կենսական աշխատանքին, որուն իբրեւ արդիւնք Գանատան պաշտօնապէս ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը:

Օրուան պատգամաբերն էր Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհուրդի համանախագահ եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ընկեր Մուրատ Փափագեան: Ան յայտնեց, թէ պէտք է ընդունինք թուրքիոյ եւ Ատրպէյճանի կատարած ոճիրները, որոնք սկսած են 100 տարի առաջ ու կը շարունակուին մինչեւ այսօր: Այս դարուս ընդունելի է թուրքիոյ եւ Ատրպէյճանի մարդկային

իրաւունքներու շարունակական խախտումները, ընդունելի չեն Դարաբաղի դէմ կատարուած բռնարարները, որոնք կը վտանգեն արցախցիներուն կեանքը: Պահը հասած է Արցախի հարցով արդար ու խաղաղ լուծումի մը յանգման, ի միտի ունենալով թէ Արցախը երբեք պիտի չմիանայ Ատրպէյճանին: Ան աւարտեց իր խօսքը շնորհակալութիւն յայտնելով Գանատայի կառավարութեան, որ ցոյց կու տայ, թէ միասնաբար կրնանք ոտքի կանգնել անարդարութեան դէմ եւ մէկ բռնեցք դառնալ՝ մարդկային իրաւունքներու պաշտպանման ի խնդիր:

Ձեռնարկը իր աւարտին հասաւ միացեալ աղօթքով եւ ցեղասպանութեան նուիրուած արձանին տակ ծաղիկապակի գետեղումով:

## Բազմախազար հայորդիներ Ծիծեռնակաբերդի մէջ յարգեցին Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը

24 ապրիլին նախագահ Սերժ Սարգսեան, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը եւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, օտար դիւանագէտներ, ինչպէս նաեւ առաւօտեան կանուխ ժամերէն մինչեւ երեկոյեան ուշ ժամեր բազմահազար հայորդիներ, սփիւռքահայեր, օտարներ Ծիծեռնակաբերդի բարձունքին անդամ մը եւս յարգեցին ցեղասպանութեան զոհերու յիշատակը եւ Մեծ եղեռնի անմեղ զոհերու յիշատակը յաւերժացնող անմար կրակին մօտ ծաղիկներ գետեղեցին՝ ի յիշատակ անգերեզման մնացած մէկուկէս միլիոն սուրբ նահատակներուն:

Տեղի ունեցած հոգեհանգստեան կարգ՝ նախագահութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին:

Արարողութենէն ետք Հանրապետութեան նախագահը, վեհափառ հայրապետը եւ պաշտօնական անձնաւորութիւններ այցելեցին նաեւ Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ եւ դիտեցին Հայաստանի անկախութեան 25-ամեակին նուիրուած «Եղեռնէն դէպի անկախութեան վերականգնում» խորագիրով ժամանակաւոր ցուցադրութեան բացառիկ ցուցանմոյշներն ու Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրի կառուցման 50-ամեակին նուիրուած ցուցադրութեան օրինակները:

## Աւանդական դարձած ջահերթին մասնակցեցան հազարաւոր հայորդիներ

23 ապրիլին, Հայոց ցեղասպանութեան 102-ամեակին առիթով, Երեւանի Ազատութեան հրապարակէն սկիզբ առաւ ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միութիւններու աւանդական դարձած «Ջահերով երթ», որ տարիներէ ի վեր կը համախմբէ պահանջատիրութեան գաղափարը կրող հազարաւոր հայորդիներ:

Երթին կը մասնակցէին բազմահազար երիտասարդներ՝ տարբեր կուսակցութիւններէ, հասարակական կազմակերպութիւններէ, ուսանողական միութիւններէ, ինչպէս նաեւ անհատ քաղաքացիներ:

Երթը սկսելէ առաջ երիտասարդները՝ իբրեւ բողոքի արտայայտութիւն, այրեցին թուրքիոյ դրօշակը եւ այդ կրակով վառեցին իրենց ջահերը:

Հայրենասիրական երգերով ու պահանջատիրական կոչերով Ծիծեռնակաբերդի յուշահամալիր հասած երթի հազարաւոր մասնակիցները մէկ վայրկեան լուծեցին յարգանքի տուրք մատուցեցին Մեծ եղեռնի աւելի քան մէկուկէս միլիոն սրբաբառուած նահատակներուն յիշատակին: Անմար կրակին մօտ հոգեւորականներ աղօթեցին առ Աստուած, խոնարհուեցան Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած երկիրներու դրօշակները: Երիտասարդները ծաղիկներ գետեղեցին անմար կրակին շուրջ:





# VILLAGE GREC

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !



KNOWN FOR THE  
BEST SOUVLAKI  
& GYRO IN TOWN!



4491, boul. Samson, Chomedey, Laval • Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h      Sun. - Wed. 11am - 11pm  
Jeudi à sam. : 11h à minuit      Thurs. - Sat. 11am - midnight



**CASSANDRA I.D.A. PHARMACY**

**ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY**

**PHARMACISTS**  
**SARKIS BALIAN, BScPhm, RPh**  
**MARAL BALIAN, PharmD, RPh**  
**VARTAN BALIAN, PharmD, RPh**

**ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝  
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻԶ**

**ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝  
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ  
 ՎԱՐՎԱՆ ՊԱԼԵԱՆ**

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

**Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:**

**Walk-in Clinic onsite: (416) 331-9111**

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)  
 Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048



# Հորիզոն

ՇԱՐԱԹ՝ԱԹԵՐԹ

Օգոստոս 25 - Սեպտեմբեր 8



Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպեսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մեջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը:

Տեսարժան վայրերուն մեջ ընդգրկուած են.

Դաղիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք...

Խրախճանք Դիլիջանի անտառներուն մեջ եւ Արցախի հայկական գիւղերուն մեջ:

Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$3450.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy

Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ հասերգներու, պտոյտներու (Տաթեւի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երեւանի Հանրապետութեան հրապարակ քաղկով 2 վայրկեան է՝ [www.hotelaviatrans.am](http://www.hotelaviatrans.am)

Արձանագրուելու համար հեռաձայնել 514 332-3757 թիւին:



# ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

## LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL



www.aniristorante.ca

Fine Dining  
Catering  
Party Room

US+CANADA  
TOUR | 2017  
SACRAMENTO  
LOS ANGELES  
TORONTO  
MONTREAL  
BOSTON  
FRESNO

514.856.0868  
514.965.9779

ՄՈՒՐՐ ՅԱԿՈՐ  
ՎԱՐՁԱՆՆԻ  
Բնակարանային արձիկ

3433 R.E. SMITH, MONTREAL, QC, H3H 1P5

ՈՒՐԱԹ 12 ՄԱՅԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՁԱՆՆԻ

ՇԱՐԱԹ 13 ՄԱՅԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՁԱՆՆԻ

ՄՈՒՏՐՈՒՆՈՒՅՐ՝ \$35 և \$50

ԻՄՈՒՏՐՈՒՆՈՒՅՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏՆԱԳՐԱԿԱՆ ԷՎ  
ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



### ՄԻՐՈՎ ԱՊԱԳԱՅԻՑ ԿԱՍ ME A CULPA 2

ՀԵՂԻՆԿ ԿԱԿՈՍ ՄԱՅԻՍԻՆ ԲԵՄԻՐՈՒ ԱՐԹՈՒՐ ՄԱՅԻՍԻՆ  
ՄՏԱՅՐԱՅՄԱՆ ՀԵՂԻՆԿ ԱՐՄԵՆ ՀԱՄԱՐՉՈՒՄԵԱՆ

Գերբայ ՎՐԱՑ ԹՈՒՄՅԵԱՆ ՍԱՄՍՈՒ ՍՏԲՈՒՅԵԱՆ

ԼԵՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ ԶՈՒՆԵՏԱ ՍՏԲՈՒՅԵԱՆ ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆ  
ԻՐԻՆԱ ԴԱՆԻԼԵԱՆ ԱՐԱ ԿԱՐԱԳԵԱՆ ԳԵՈՐԳ ՄԻՆԱՍԵԱՆ

Ինֆորմացիայի համար հարցախոսակցության կայանները նայե՛ք հետևյալ կայքերին

## Իւրաքանչիւր Գիրք

# Միայն

# 20\$

- Իմ Առաջին Աստուածաշունչս
- ՆԱՐԵԿ
- Պատանիիկ Աստուածաշունչը

Կարէի է գնել  
Առաջնորդարանի Գրախանութիւն

514-856-1200

prelacy@armenianprelacy.ca



# ՌԻՄՍԱԿՈՐԻՉ

## ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 6

ՄԱՅԻՍ

MAY / MAI

YEAR / ANNÉE 1

NO.6 2017



ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

### ԲԱՄԲԱՍԱՆՔԸ ՉԱՐԻՔՆԵՐԷՆ ՄԵԾԱԳՈՅՆԸ



ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմին

Մարդուն մեծագոյն թերութիւններէն մէկն է ինքզինք արդարացնելու համար ուրիշը նուաստացնելը՝ զրպարտութեամբ եւ բամբասանքով: Յաճախ մարդիկ ուրիշներուն թերութիւնները կ'ուզեն գտնել եւ քննարկման առարկայ դարձնել բամբասանքով, նոյնիսկ եթէ այդ թերութիւնը կրկնակի կամ եռակի չափով իրենց մէջ գոյութիւն ունենայ:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, կ'ուզէ մարդ արարածին այս թերութիւնը ուղղել ամենայն պարզութեամբ: Այս իմաստով, Յիսուս հարց կու տայ, թէ ինչո՞ւ եղբորդ աչքին շիւղը կը տեսնես եւ քու աչքիդ գերանը ոչ: Հանձնախա աչքիդ գերանը եւ ապա հետամուտ եղի՛ր հանելու եղբորդ աչքին շիւղը:

Այո, շատ են իրապէս «գերան» ունեցողները եւ ուրիշներուն իրենց նմաններուն, թերութիւնները տեսնող եւ դատաստան կատարողները: Անոր համար Յիսուս Լեբան Քարոզին մէջ պատգամ կու տայ իր աշակերտներուն եւ անոնց միջոցաւ՝ ամբողջ մարդկութեան, ըսելով. «Մի՛ դատէք ուրիշները, որպէսզի Աստուած ալ ձեզ չդատէ. որովհետեւ ի՛նչ սկզբունքով որ ուրիշները դատէք՝ Աստուած անով պիտի դատէ ձեզ...» (Մտ 7.1-2):

Այո, բամբասանքը որպէս վատ սովորութիւն եւ կամ գիտակցաբար կատարուած արարք, շատ չարիքներու աղբիւր է եւ պատուհաս, հետեւաբար դատապարտելի եւ մեծ յանցանք է. մեծ մեղք կը համարուի:

Դարձեալ Յիսուս կը բացատրէ՝ ըսելով. «Ինչ որ կ'ուզէք մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց, այս սկզբունքը իր մէջ կը խտացնէ Օրէնքն ու մարգարէներու ուսուցումները» (Մտ 7.12): Եթէ չէք ուզեր, որ մարդիկ ձեզ բամբասեն, վիշտ պատճառեն, դուք ալ ուրիշին նկատմամբ այդպէս մի՛ վարուիք: Յաճախ մարդիկ բամբասանքով, զրպարտութեամբ, ստորնութեամբ, նախանձով ու թշնամութեամբ ուրիշին՝ իրենց նմանին, արժանապատուութիւնը կ'ոտնակոխեն: Մենք չենք կրնար դատել ուրիշը. Աստուած միայն կրնայ դատել. Ի՛նքն է ամենաարդար դատաւորը, եւ Իրն է ամենաարդար դատաստանը:

Հետեւաբար, կարեւորն ու կարեւորագոյնը մեր անձերը քննելն է, մեր թերութիւնը ճանչնալը, մէկ խօսքով՝ մեր անձի՛ն դատաւոր ըլլալը:

Եկէ՛ք քննենք մեր անձերը, քննենք մեր միտքը եւ հարց տանք. «Կատարա՞ծ ենք մեր պարտականութիւնները հայրենիքին հանդէպ, ազգին ու եկեղեցւոյ, մեր ծնողներուն, զաւակներուն, մեր քրոջ ու եղբոր հանդէպ, որպէս հոգեւորական թէ աշխարհական սպասաւորներ, ղեկավարներ, մտաւորականներ, ուսուցիչներ, ծնողներ եւ զաւակներ»:

Հեռո՛ւ մասնք չարիքներու աղբիւրէն եւ անոր մեծագոյն պատճառներէն, մեղքէն՝ բամբասանքէն...

### ԴԱՍԵՐ ՃՇՄԱՐԻՑ ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Ինչպէս որ, երբ մէկը վերք ունենայ եւ վրան քիչ մը դեղ դնելէն ետք այլեւս զգոյշ չգտնուի, ձգելով որ վերքը ենթարկուի ջուրի, փոշիի, այլ բաներու եւ բորբոքի, այդ մարդը փաստաւ կ'ըլլայ իր ծուլութեան ու անհոգութեան պատճառով եւ ոչ թէ դեղի: Ճիշդ նոյնը մեզի եւս կը պատահի. քիչ մը կ'եղբորանալով կը լսենք աստուածային խօսքերը, ապա կ'եանքի հետքոտ վազքին

մէջ կը նետուինք. այս ձեւով մեր լսածէն բացարձակապէս չենք օգտուիր աշխարհիկ հոգերու պատճառով եւ ոչ թէ խօսքի տկարութեան:

Չարիքին պատճառը մարմինը չէ, այլ ցանկութիւնը եւ բիրաւոր ախտերը, որոնք կը նեղեն հոգին, երբ մարմինը տկարանայ: Հետեւաբար, յայտնի է, որ չարիքները մարմնէն չեն, այլ հեշտասէր հոգիէն: Եթէ մարմնէն ըլլային, ինչպիսիք են աշխատանքը, քունը, քաղցը, ծարաւը, ուրե՛ս բոլոր մարդիկը անոնց կ'ենթարկուէին, իսկ երբ սուրբերը մեղքերէն զուրկ մնացին, ուրե՛ս յայտնի է, թէ մեղքի պատճառը մարմինը չէ, այլ թոյլ հոգին: Ուստի, ջանանք գորացնել հոգին, որպէսզի ան տիրէ մարմնին, որպէսզի կարենանք հասնիլ յաւիտեանական պսակներուն՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքով:

Բարսեղ Մաշկետրցի

### ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

Բարերա՛ր Տէր, որ Քու մեծ գթութեամբ յաւիտեանական հանգիստը պատրաստեցիր առաքինութեամբ վաստակածներուն համար եւ քաղցր հրաւերով Քեզի կանչեցիր մեղքով ծանրաբեռնուածներն ու տառապողները: Շնորհէ՛, Տէ՛ր, որ մենք եւս անխռով խաղաղութեամբ անցնենք այս գիշերը, եւ մեղքերու ծանրութենէն յոգնածներս Քու ողորմութեամբ հանգստացուր, եւ արժանի ըրէ մշտնջենաւոր հանգիստին, բոլոր սուրբերուն հետ միասին: Եւ տուր որ շնորհակալութիւն յայտնենք ու փառաւորենք Քեզ Չօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:





## ՀՈԳԵԻՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

### ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

«Եւ բանը մարմին եղել եւ բնակեաց ի մեզ»

Աստուածորդին, այսինքն՝ բանը, մարդացաւ, մարդկային բնութիւն առաւ եւ մարդոց մէջ ապրեցաւ: Քրիստոս հակառակ Իր աստուածային բնութեան ունէր նաեւ մարդկային բնութիւն: Եղաւ Իր աշակերտներուն հետ, քարոզեց մարդոց, բժշկեց հիւանդները, կերակրեց անօթիները եւ ըստ աստուածային փրկագործական ծրագրին՝ խաչ բարձրացաւ, որպէս փրկութեան նոխազ, եւ Իր յաղթական յարութեամբ երկինք բարձրացաւ, հօր Աստուծոյ քով:

Սակայն իր մեկնելէն ետք, ժառանգ մը ձգեց մեզի համար, կտակ մը տուաւ, եւ այդ կտակը կեանքի ու անմահութեան Իր խօսքերն են: Ասոնք պարզ վերացական խօսքեր չեն, գորս յաճախ կը լսենք ու կը կրկնենք, այլ ռեւէ քրիստոնէայ հաւատացեալի ինքնութիւնն ու իսկութիւնը կը կազմեն: Զօրեղ է Աստուծոյ խօսքը եւ հրաշագործ: Ահա թէ ինչն է Քրիստոս կ'ըսէ. «Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, իմ խօսքերս պիտի չանհետանան» (Մատթ. 24. 35):

Քրիստոս կ'ըսէ եւ եմ կեանքը, ճշմարտութիւնը, ով որ ինձի գայ, բնաւ մահ պիտի չտեսնէ, եւ եմ ճշմարիտ բանը, խօսքը, եւ եմ ալֆան ու օմեկան:

Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին մեզի տուաւ յաւիտենականութեան ու անմահութեան բանալին, այսինքն՝ Աստուծոյ խօսքը: Երբ պահ մը թերթատենք Աստուածաշունչն ու Աւետարանը անոնց մէջ պիտի տեսնենք հոգեմտաւոր արժէքներու ու ընկերային հարցերու մասին շատ մը ուղղորդիւններ, պատուէրներ ու օրէնքներ, որոնք սակայն պատահականութեամբ չեն գրուած այնտեղ, այլ Աստուծոյ շունչն ու Աստուծոյ խօսքն են, գորս կը ներառեն իրենց մէջ՝ մարդուն հոգին սնուցանելու ու աճեցնելու:

Դժուարութիւններով ու գայթակղութիւններով լեցուն այս աշխարհին մէջ ապրող մարդ արարածը, որեւէ ժամանակէ աւելի պէտք ունի Քրիստոսի եւ Հօր Աստուծոյ խօսքերուն, խրատներուն ու մխիթարութեանց:

Այսօրուան կեանքը մարդս կը դնէ շատ մը խոչընդոտներու ու մարտահրաւերներու առջեւ, սակայն անհնարին է տապալել ու քանդել այն հոգին ու սիրտը, որոնց մէջ Քրիստոս կը բնակի: Ունենաք Աստուածագիտութեան լոյսն ու Անոր խօսքերը, որոնք իւրաքանչիւր հաւատացեալի փրկութեան երաշխիքներն են, ինչպէս կ'ըսէ եկեղեցւոյ հայրերէն Սարգիս Շնորհալի. «Փառաւորենք զՔրիստոս, որովհետեւ յաւէտ կը վայելենք անոր շնորհները եւ անոր գիտութեամբ անձար բաներու հաղորդ եղանք եւ արքայութեան հրաւիրուեցանք: Փառաւորենք զայն ոչ միայն խօսքով, այլ գործով, ոչ սոսկ գործով, այլ ուղիղ հաւատքով, յոյսով ու սիրով»:

Լուրջան Լրջ. Պաշտեան



### ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

#### Միակնի Մայրը

Կ'ատէի մայրս ու կ'ամչնայի անկէ, քանի որ միակնի էր: Ան դպրոցի խոհարարն էր: Կ'աշխատէր, որ ընտանիքը պահէր: Նախակրթարանի աշակերտ էի, երբ օր մը ան բարեւեց ինձի: Շատ ամչցայ: Անտեսեցի զինք եւ ատելի նայուածք մը ուղղեցի ու փախայ: Յաջորդ օրը, դասընկերներէս մին ըսաւ, «Հէ յ, քու մամադ մէկ աչք ունի»: Գետնին տակը անցայ եւ ուզեցի, որ մայրս անհետանայ ու ըսի իրեն, «Եթէ քու պատճառովդ մարդիկ վրաս պիտի խնդան, երանի թէ մեռնիս...»: Մայրս բնաւ չպատասխանեց: Այդքան բարկացած էի, որ վայրկեան մ'իսկ չմտածեցի ըսածիս մասին, անտարբեր էի անոր զգացումներուն: Կուզէի տունէն հեռանալ եւ գործ չունենալ մօրս հետ:



Ուստի շատ ջանք թափեցի եւ առիթը ունեցայ ուսումս քաղաքէն դուրս շարունակելու: Ապա ամուսնացայ, անձնական տուն գնեցի եւ զաւակներ ունեցայ, շատ ուրախ էի կեանքովս: Օր մը, մայրս եկաւ մեզի այցելելու: Երկար տարիներ զիս չէր տեսած, ոչ ալ թոռնիկները: Երբ դրան առջեւ կանգնեցաւ, զաւակներս վրան խնդացին, եւ ես պոռայցի, թէ ինչն է առանց հրաւերի եկած էր: Ապա զայրացած ըսի. «Ինչն է եկար եւ զաւակներս վախցուցիր: Կորսուէ՛ հոսկէ: Մայրս ցած ձայնով պատասխանեց. «Ներողամիտ կըլլաք, թերեւս սխալ հասցէ եկած եմ»:

Օր մը նամակ մը ստացայ նախակրթարանէս, որ շրջանաւարտներու հաւաքոյթի մը կը հրաւիրէր զիս: Տիկնոջս ստեցի եւ ըսի, թէ գործով ճամբորդելու եմ: Հաւաքոյթէն ետք, հետաքրքրութենէ մղուած զացի մեր խրճիթը: Դրացիները ըսին, թէ մայրս մեռած էր: Կարծիք մը արցունք իսկ չթափեցի: Անոնք նամակ մը տուին ինձի: Մայրս ուզած էր, որ ինձի տան:

**«Ամենասիրելի որդիս, Միշտ քու մասիդ կը մտածեմ: Կը ներես, որ տունդ եկայ եւ զաւակներդ վախցուցի: Շատ ուրախացայ, որ դպրոցական հաւաքին պիտի գաս: Սակայն չեմ կարծեր, որ անկողինէն կրնամ ելլել քեզ տեսնելու համար: Կը ցաւիմ, որ տեւական խայթոց մը եղայ քեզի, մինչ կը մեծնայիր: Հիմա կուզեմ, որ գիտնաս, թէ երբ դուն շատ փոքր էիր, արկածի մը հանդիպեցար ու մէկ աչքդ կորսնցուցիր: Որպէս մայր, չդիմացայ քեզ մէկ աչքով տեսնելու ցաւին, ուստի իմ աչքս տուի քեզի: Որքան հպարտ էի, որ տղաս իմ տեղս աշխարհը կը տեսնէր իմ աչքովս: Քեզ ամբողջ սրտով կը սիրեմ տղաս: Մամադ»:**

Շատ արցունք թափեցի եւ շատ զոջացի, սակայն անմահ մայրս կողքիս չէր....

Ողջութեան առեւտր հասկցիր ու հասկցուէ: Միայն դատողութիւն մի՛ ըներ: Հարցերդ լուծէ՛, որպէսզի խղճի խայթ չունենաս, այլ ներելով ու ներուելով խաղաղութիւն ունենաս:

«Ուրե՛մս ժամանակէն առաջ դատողութիւն մի՛ ըներ, մինչեւ գայ Տէրը՝ որ խաւարին գաղտնիքը ի լոյս պիտի հանէ ու սրտերուն խորհուրդները յայտնի պիտի ընէ եւ այն ատեն ամէն մէկուն գովութիւնը Աստուծմէ պիտի ըլլայ» (Ա. Կորնթ. 4:5):

### ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

#### ԱԲԷԼ



Մարդկային կեանքին եւ Աստուծոյ սիրոյն համար նահատակուած առաջին մարտիրոսը եղաւ Աբել, որ արժանացաւ Քրիստոսի կողմէ «Արդար» կոչուելու պատիւին: (Մտ 23.35)

Ծննդոց գիրքին 4-րդ գլուխը կը խօսի երկու եղբայրներու՝ Կայէնի եւ Աբելի մասին, որոնք կը ներկայացնեն մարդկային առաջին ոճրագործութիւնն ու առաջին նահատակութիւնը:

Կայէն որպէս պարտիզպան, իսկ Աբել հովիւ, իւրաքանչիւրը իր ունեցածէն նուէր կը բերէ Աստուծոյ: Աստուած տեսնելով որ Աբել իր ունեցածին լաւագոյնը կը նուիրէ Աստուծոյ, կ'ընդունի անոր գոհը եւ կը մերժէ Կայէնին բերածը, որ Աբելի բժախնդրութեամբ չէր ներայացուած Աստուծոյ:

Կայէն այս տեսնելով կը նախանձի Աբելէն եւ առիթ գտնելով կը սպաննէ զայն, դառնալով առաջին եղբայրասպան ոճրագործը:

Կայէն եւ Աբել, որպէս խորհրդանիշներ, կը ներկայացնեն մարդոց երկու խաւերը, Կայէն՝ մեղաւոր, իսկ Աբել՝ արդար:



**Josué 1 : 8 «Que ce livre de la loi ne s'éloigne point de ta bouche ; médite-le jour et nuit, pour agir fidèlement selon tout ce qui y est écrit ; car c'est alors que tu auras du succès dans tes entreprises, c'est alors que tu réussiras. »**

Il y a des chrétiens, par exemple, qui s'appuient encore sur ce que disent les horoscopes et calquent leur vie en fonction de tout ce qui s'y dit. Pourtant ils se disent être chrétiens et suivre Dieu. Or la Parole de Dieu est très claire là-dessus, que c'est une abomination devant l'Éternel de pratiquer de telles choses et que c'est par ces abominations que Dieu a chassé les nations qui les pratiquent.

(Deutéronome 18 : 10-12). De même on peut parler aussi de la fête d'halloween. Tout le monde est content quand cette fête arrive. On se déguise, on est content de mettre des masques de mort et de s'amuser à se faire peur. Peut-être diriez-vous, que c'est juste un amusement et que ça ne fait rien de mal. Pourtant c'est l'esprit de mort qui se cache derrière halloween.

Quand on célèbre halloween, on met en avant la mort et les sacrifices d'êtres humains, car l'origine d'halloween c'est le sacrifice de personnes offertes pour un dieu de la mort. Or si nous regardons bien, tout ce qu'on célèbre à Halloween, n'a rien avoir avec Dieu et sa bonté. Nous les chrétiens, nous célébrons la vie ! Amen. Halloween évoque la mort, ou encore la peur or Dieu nous donne la vie ou encore la joie. Dans ce même chapitre du deutéronome, la Parole de Dieu nous dit que ceux qui évoquent ou qui célèbrent des esprits de mort comme Halloween se détournent de la voie de Dieu car c'est l'esprit du diable qui règne dans ce genre de fête. Tout cela pour dire que si nous nous disons chrétiens, alors reflète vraiment dans notre vie Dieu et sa Parole et non pas juste porter des titres ou des statuts de chrétiens. Un vrai chrétien c'est une personne qui reflète toutes les personnalités de Jésus, tous les jours de sa vie. C'est de s'attacher complètement à la doctrine de Christ et de ne pas s'en éloigner ni à droite ni à gauche. Gloire à Dieu pour qu'Il nous a donné sa Parole comme guide dans notre vie. La Parole de Dieu est notre GPS, pour marcher sur le chemin de la vie, suivons-la en pratiquant tout ce qui est selon la volonté de Dieu et de se détourner de tout ce qui est à l'encontre de sa volonté. Ne faisons plus du moitié moitié, moitié avec Dieu, et moitié avec le monde. Attachons pleinement à Dieu et à ses commandements, et c'est ainsi que Dieu aura toujours le regard sur nous. Ainsi quelque soit les impasses que l'on peut traverser dans notre vie, Dieu sera toujours là pour nous et toujours prêt à se lever de son trône, à agir en notre faveur pour manifester toute sa gloire dans notre vie ! Amen !



## LIFE LESSONS FROM A DEEP DARK DUNGEON

On the sixth Sunday of Big Lent, the Armenian Church commemorates an event related to our patron saint, St. Gregory the Illuminator – an event that became a turning point in Armenian history. Although the event is known by a negative title, “The imprisonment of St. Gregory in the deep dungeon of Khor Virab”, and yet, we learn key life principles from the life and sufferings of St. Gregory. Here is the summary of the background story that took place at the end of the third and beginning of fourth century AD, during the pre-Christian era in Armenia.

Anak Barthev, a knight and the father of Gregory, assassinated King Khosrov of Armenia. Armenian soldiers followed him and executed him. Baby Gregory was saved by his custodian and was taken to Caesarea, where he was raised as a Christian. At a young age, Gregory returned to Armenia and served in the royal court as the secretary of King Dertad, the son of King Khosrov. Dertad did not have much information about Gregory's real identity, but later he found out that Gregory was a Christian, which was a forbidden religion in Armenia at that time. King Dertad forced Gregory to deny his faith and worship the heathen idols. Gregory refused and was imprisoned and interrogated. Additional information came out, which shocked the King. He found out that Gregory was the son of his father's assassin! Dertad was outraged, so he sentenced Gregory to life-time imprisonment in the deep dungeon of Khor Virab. Throwing someone in Khor Virab was actually a death penalty for the worst criminals and traitors. Gregory survived in that dark pit for 13 years. It is believed that a secret Christian woman brought him bread and water every day.

Thankfully the story does not end there. After 13 years, King Dertad became seriously ill and there was no remedy for his illness. In a dream, his sister princess Khosrovitoukht received a revelation that if Gregory prayed the King would be healed. In a dream, his sister princess Khosrovitoukht received a revelation that if Gregory prayed the King would be healed.

## Message du Prélat

La Médisance, une des plus grandes malfaisances

Un des plus grands défauts de l'homme est de se prouver soi-même aux dépens des autres pour les humilier en les médisant et les inculpant. Très souvent, les personnes veulent voir les défauts des autres et veulent les rendre les objets d'une étude en les médisant.

Notre Seigneur Jésus Christ veut corriger ce défaut humain avec la plus grande simplicité. Dans ce sens, Jésus questionne pourquoi nous voyons la paille dans l'œil de notre frère, mais n'apercevons pas la poutre dans notre propre œil.

Oui, beaucoup de personnes entre nous ont une « poutre » et ces personnes jugent et médisent les personnes qui leur ressemblent. C'est pour cela que Jésus, durant Son Sermon sur la montagne, prononce un ensemble d'enseignements moraux à Ses disciples ainsi qu'à l'humanité et dit, entre autres, ceci : « Ne jugez point, afin que vous ne soyez point jugés. Car on vous jugera du jugement dont vous jugez, et l'on vous mesurera avec la mesure dont vous mesurez. » (Matthieu 7:1-2)

Oui, la médisance, qu'elle soit commise comme une mauvaise habitude ou comme un acte conscient, est une source de malice et un fléau. Par conséquent, cet acte est condamné et considéré comme un grand péché.

Jésus nous l'explique encore une fois en disant : « Tout ce que vous voulez que les hommes fassent pour vous, faites-le de même pour eux, car c'est la loi et les prophètes. » (Matthieu 7:12) Si vous ne voulez pas que d'autres personnes vous médisent ou qu'ils vous fassent du mal, vous devez vous comportez de la même manière envers eux. Très souvent, des personnes vont piétiner et même ruiner l'honneur de leurs pairs en les médisant, les inculpant et les infériorisant à cause de leur jalousie et leur haine. Nous ne pouvons pas juger les autres. Dieu est le seul qui peut nous juger. Il est le seul juge justifié et Il est le seul avec un tribunal juste.

Par conséquent, il est très important que nous menions des introspections et reconnaissons nos propres défauts. En d'autres mots, nous devons devenir notre propre juge.

Prenons du temps ensemble pour mener ces introspections et posons-nous les questions suivantes. « Avons-nous réalisé nos responsabilités envers notre peuple, notre église, nos parents, enfants et famille? »

RESTONS LOIN de la source de malice et loin d'un des plus grands péchés, la médisance.

*Archevêque Papken Tcharian*


At first, no one believed that Gregory could still be alive, but upon the insistence of the princess, soldiers were sent to Khor Virab, and Gregory was brought out of the pit and presented to the King. Gregory prayed and the King was healed and baptised, and all the members of the royal family and the court were baptised, and eventually Christianity was declared by the King to be the religion of Armenia in the year 301; thus Armenia became the first Christian nation.

A whole nation was enlightened and transformed; pagan beliefs were put behind, and the God of love and light and peace, the Creator God who is a spiritual reality, replaced all the human-made material gods. After a while, Gregory had a vision, where he saw the only begotten Son of God, Christ Jesus, descending from heaven and drawing the layout of the church that he wanted Gregory to build in Vagharshabad, the then capital of Armenia. That church later became the Cathedral of Holy Etchmiadzin, which still stands in Armenia.

This is the heroic story of St. Gregory, who defied all odds and became the founding father of the Armenian Church, and the patron saint of a whole nation. What do we learn from his life example?

- Reconcile and make peace with your past. After the treason of his father, Gregory returned to Armenia and revealed the truth about his identity and his faith, and though he paid a high price by his sufferings, it opened the door for him to reconcile with King Dertad. Making peace with their past, together they transformed a whole nation.

*Father Kevhert Kosbakian*



# ՈՒՄԱՒՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

## Ո՞՞՞՞ ԵՄ ԵՄ

Գտնելու համար պահուած անունը, իւրաքանչիւր պտուղի անունը գրել համապատասխան տուփիկներուն մէջ: Դեղին տուփիկներուն տառերը միացնելով կ'ունենաք պահուած անունը:

<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

- 1- Կրնա՞ք ըսել թէ պահուած անունին տէրը ի՞նչ մարտի մէջ նշանաւոր էր:
- 2- 2017 տարին իր ծննդեան քանիերորդ ամեակն է:



### ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հայեցի դաստիարակութեան առաջին եւ հիմնական երաշխիքն է հայերէնախօսութիւնը: Անշուշտ սկսելով տունէրէն, ապա շարունակելով հայկական դպրոցներէն, եկեղեցիներէն եւ ակումբներէն ներս: Ան պետք է շարունակուի նաեւ անկէ ետք, երբ անհատը կը նետուի կեանքի ասպարէզ: Հայերէնը պետք է ապրի մեր առօրեային մէջ մեզի հետ, որպէսզի ապրող եւ զարգացող լեզու ըլլայ:

Սակայն հայերէնախօսութիւնը բաւարար չէ հայեցի դաստիարակութիւն ջամբելու համար, ան ունի նաեւ այլ բաղկացուցիչ տարրեր, որոնք նոյնքան կարեւոր կը նկատուին. հայոց պատմութենէն տեղեակ ըլլալ, հայ եկեղեցոյ եւ հայ մշակոյթին մասին հիմնական ու կարեւոր տեղեկութիւններ ունենալ, մաս կազմել ազգային եւ գաղութային կեանքին, ծանօթ ըլլալ հայութիւնը յուզող հարցերուն, մարտահրաւիրներուն, Հայ Դատին ու մեր պահանջներուն եւ այլն: Այս բոլորին ստակ ծանօթութիւնն ալ բաւարար չէ, կայ այլ հիմնական ու առաջնահերթ տարրը, որն է ազգային հպարտութեան զգացումը: Եթէ հայ անհատը զերծ է այդ զգացումէն, ապա կը նշանակէ, թէ ան հայկականութիւնը թօթափած անձնաւորութիւն է, որքան ալ քաջատեղեակ ըլլայ հայոց պատմութեան, լեզուին ու մշակոյթին: Հայ անհատը պետք է նախ եւ առաջ հպարտ զգայ իր ազգային պատկանելիութեամբ, ապա նաեւ զօրաւոր հաւատք ունենայ ազգին ու հայրենիքին ապագային նկատմամբ, որպէսզի կարենայ գործօն մասնակցութիւն ունենալ ազգային ու գաղութային կեանքին:

Սոնա Թիթիզեան

Հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի եւ Կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին

**Լսենք Աստուծոյ Խօսքը**  
Սուրբ Գրային Սերտողութիւն  
ՆԻԼԹ՝

«ՂԵԻՏԱՑԻՆԵՐՈՒՆ ՊԻՐՔԸ»

Ներկայացնող՝  
Գաբրիէլ Քինյ. Գամայեան



Ուրբաթ, 19 Մայիս 2017, երեկոյեան ժամը 7:30pm  
Ազգային Առաջնորդարանի Դահլիճ  
3401 Rue Olivar-Asselin, Montreal, QC H4J 1L5

Հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի եւ Կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին

**Լսարան Երիտասարդներու Համար**

**Անձնասպանութիւնն ու Շահատակութիւնը**

Երկուքն ալ իմացեալ մահ են, սակայն ինչպէ՞ս զատորոշել

Ներկայացնող՝  
Տիար Գրիգոր Դերձակեան

Ուրբաթ, 5 Մայիս 2017, երեկոյեան ժամը 7:30pm  
Ազգային Առաջնորդարանի Դահլիճ  
3401 Rue Olivar-Asselin, Montreal, QC H4J 1L5





# Ո՞ՒՐ ՊԻՏԻ ՀԱՍՑՆԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ՃԱՆԱԶՈՒՄ»ՆԵՐԸ

«Ցեթիլ» թուական. «ԱՊՐԻԼ 24»: Եկաւ եւ անցաւ, ինչպէս ամէն տարի:

Մեր եւ մեր «բարեկամ»ներուն հոգեպարար ճառերը: Ոչ ոք հարց կու տայ, թէ ի՞նչ յառաջդիմութիւն արձանագրուած է իրաւունքի վերականգնման ճամբուն վրայ:

Այդ իրաւունքի վերականգնումը աշխատանքային օրակա՞րգ է:

Նոյնիսկ եթէ միայն մագի հաստութեամբ թելով մը կապուած ենք ազգին, պահ մը կը մտածե՞նք մեզի պարտադրուած մեծ ոճիրին եւ անոր հետեւանքներուն մասին, երբեմն այլ կ'ընդվզի՞նք տեւող եւ տիրող անտարբերութեան դէմ:

Ընդվզիլ, այո՛: Բայց ինչպէ՞ս արմատական ձեւով կը հակազդենք «հետեւանքներ»ուն:

Կ'երջանկանանք, երբ «քաղաքական» դէմք մը, յանկարծ յիշեցում կ'ընէ «ցեղասպանութեան» մասին: Օտարը երբեք հայոց խլուած իրաւունքներու մասին մասին չի խօսիր, մնալով ցեղասպանութեան ճանաչման բարոյամխիթարական ալիքներուն վրայ: Այդ «յիշեցման» եւ «ճանաչման» համար կը պայքարինք, բարձրագոյն մակարդակներէն մինչեւ թաղապետութիւններ:

Այս բոլորը խորքային քաղաքական զբաղո՞ւմ է, թէ «համայնքային երեւելիութեան» որոնում, զեռ հայրենահանուած համայնքներու պարագային հասկնալի, «հայրենալքածներու համայնքներ»ու պարագային ի՞նչ ազգային քաղաքական հեռանկար կարելի է ենթադրել:

Հայաստան առեւտրական, տնտեսական աճման եւ բարօրութեան հեռանկարներով, միտուած եղած է, եւ է, «բարի դրացիական» յարաբերութիւններու մշակման, ակնկալելով որ վերջ կը արուի շրջափակման:

Ափիւռք(ներ)ը ինքնահաստատման համար ցեղասպանութեան «ճանաչում»ներ կը հետապնդէ, ներազգային եւ միջազգային հրապարակի վրայ: Ազգային իրաւ յանձնառութիւններէ, ինքնութեան պահպանում եւ հայրենատիրութիւն, խուսափումի եղանակ մը, կրկնութեան վարժութիւն, տեղքայլ, ինքնախաբէութեան համար կը խօսուի «հզօր սփիւռք»ի մասին:

Հզօրութիւն՝ ի՞նչ ընելու, ո՞ր ծրագրի իրականացման եւ ո՞ւր հասնելու համար:

Ազմուկի խորքի պատաստը պաշտօնապէս չյայտարարուող «յաւերժական սփիւռք»ն է: Յանձնառութեամբ չենք խօսիր «հայրենահանում-ցեղասպանութեան» տրուելիք ազգային-քաղաքական պատասխանի մասին, որ կախում չունի արտաքին ուժերէն, այլ՝ մեզմէ, ըլլանք անհատներ թէ կազմակերպութիւններ:

Այդ պատասխանը հայրենատիրութիւնն է, գոր պէտք չէ շփոթել բարեսիրութիւն-օգնութեան կամ հայրենատիրական-գրօսաշրջութեան հետ:

Այնքա՞ն հեռացած ենք հայրենատիրական վերաբերումէ:

Խորհրդաժողովի մը ընթացքին, կազմակերպութեան մը ներկայացուցիչը, սփիւռք(ներ)ի երիտասարդներու Հայաստան վերադարձը եւ հոն նախաձեռնութիւններ ունենալու կարելիութիւնը

դիւրացնելու համար, առաջարկեց, որ անոնք գերծ կացուցուին գինուորական ծառայութեան:

Առաջարկը մեզ պէտք է մղէ մտածելու, նոյնիսկ լաւագոյններու պարագային, ազգային-քաղաքական խորքի եւ որակի մասին, առանց որոնց հայրենիքը կը վերածուի «սիւփերմարքէթ»ի կամ «սիլիքոն վէլլի»ի:

Ինչ որ լսեցի այդ խորհրդաժողովին, սփիւռքներու հոգեկան նահանջի արտայայտութիւնն է: Միակը չէ:

Այդ նահանջի արտայայտութիւնն է հայկական վարժարաններու փակումը: Հաստատումին պէտք է ընկերացնել «հզօր սփիւռք»ի անկարողութիւնը իր դպրոցներուն տէր կանգնելու: Յաճախ կը կրկնեմ, որ նորհաս սերունդի չնչին տոկոսը միայն կը գտնուի հայկական վարժարանի մէջ: Այս վիճակագրութիւնը պէտք է ընել յուզիչ «հզօր սփիւռք»ի մասին երբ կը խօսինք:

Քաղաքական դէմքեր, նախարարներ եւ նախագահներ, երբ ներկայ կ'ըլլան ցեղասպանութեան ոգեկոչման նախաձեռնութիւններու, կը պատահի՞ որ անոնցմէ պահանջուի «հայկական հարց»ին միջազգայնացումը, այնպէս ինչպէս որ ան կար ժ՞. դարուն եւ Ի. դարուն սկիզբը:

Հայաստանի պետութիւնը եւս, իր կարգին, մշակուած քաղաքականութիւն ունի՞ «հայկական հարց»ի միջազգայնացման համար:

Այդ միջազգայնացումն է որ պիտի բանայ դուռը բանակցութիւններու, պատմական սխալներու սրբագրութեան համար:

Պատմական սխալներ՝ որոնցմէ տուժողը միայն հայութիւնը չէ եղած: Իսկ կը պատահի՞ որ նախաձեռնութիւններ ըլլան տուժողներու միացեալ ճակատ կազմելու:

«Ոգեկոչում»ներու եւ «ճանաչում»ներու ծէսերը զեռ յիշողներուն մխիթարական պարգեւ են, բայց ոչ իրաւունքի վերականգնում:

Այդ ծէսերը կը ծառայեն ներքին սպառման եւ հզօրութեան խաբկանք կը ստեղծեն:

Եթէ ուժերու լարումով չմիջագայնացուի «հայկական հարց»ը, նոյն ծէսերը պիտի շարունակուին գումարուող ամեակներու ընթացքին:

Ինչպէ՞ս:

Խորհրդաժողովի մը ինչո՞ւ օրակարգ պիտի չդարձնէ «հայկական հարց»ի եւ բախտակից «տուժածներ»ու հարցը:

Ապրիլ 24-ին, հանդիսաւոր ոգեկոչման մը ընթացքին, բանախօսներու քառեակի մը ունկնդիրն էի:

Ես ինձի հարց տուի, թէ օտար եւ հայ խօսողները ի՞նչ ըսին որ ըսուած չըլլար: Աստ եւ անդ: Կարծէք «հոլակերպ»ներով հանդէսներ էին:

Ի վերջոյ «հայկական հարց»ը շարական կամ «նէյնիմ» չէ: Ան քաղաքական ներկայութեամբ եւ արձանագրուած յաջողութեամբ կամ ձախողութեամբ ինքզինք պէտք է հաստատէ, հաստատէր:

Ծէսերը ոչ յաջողութիւն են եւ ոչ ձախողութիւն:

Յ. Պալեան

# ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Զեղով տղման, չոր թուզն ու ծիրանն անգամ...

— Խօսքը առանց գործի մեռեալ է— կ'ըսէին մեր մեծերը: Այս իմաստուն ասոյթին մէջ «գործ» ըսելով պիտի հասկնանք անշուշտ հետեւողակա՛ն գործ, այսինքն խօսքին համապատասխանող գործ:

Խօսիլ առանց գործելու՝ անօգուտ է, նոյնիսկ՝ անբարոյական: Բայց մէկ բան է խօսիլ, այլ բան՝ գործել. իսկ գործել խօսքին անյարիր՝ ոչ միայն անբարոյական է, այլ՝ եւ վնասաբէ՛ր:

Այո՛, խօսքը առանց գործի մեռեալ է, առանց հետեւողական գործի՝ կրնայ նաեւ ըլլալ մահացո՛ւլ:

Այս ըսածս կը վերաբերի որքան կազմակերպութիւններու, նոյնքան եւ անհատներու, ըլլան անոնք պարզ քաղաքացիներ կամ ազգայիններ, կազմակերպութեան մը անդամներ թէ պաշտօնատար անձինք:

Այստեղ կ'ուզեմ անդրադառնալ անհատական պարագաներուն յատկապէս, քանի որ կազմակերպութիւններն ալ անհատներէ կը բաղկանան, եւ որքան հետեւողական ըլլան այս վերջինները, այնքան հետեւողական՝ իրենց խօսքին հաւատարիմ կը գործեն իրենց պատկանած կազմակերպութիւնները՝ միութիւններ, կուսակցութիւններ, հաստատութիւններ թէ կառավարական մարմիններ: Նաեւ, անմիջապէս ըսեմ, որ նպատակս չէ ոեւէ մէկը նշաւակել, մեղադրել, դատապարտել, այլ՝ զգուշացնել, ի հարկին ազդարարել եւ մղել, որ խօսքն ու գործը ըլլան ներդաշնակ ու համահունչ:

Լաւագոյն ձեւը օրինակով խօսիլն է, իսկ ամենէն ցայտուն օրինակը կրնայ հանդիսանալ այն հաւատաւոր, յանձնառու մարդը, որ ազգային կուսակցութեան մը անդամ է, մանաւանդ աւելի դիպուկ ըլլալու համար՝ դաշնակցակա՛ն, որ Հայաստանի ու հայութեան ազատագրութեան դատին իր կեանքն ալ նուիրելու երդում տուած է:

Կ'ենթադրեմ, նման մեծ յանձնառութեան տակ մտած անձը ամեն ճիշդ պիտի ընէ, ինչպէս իր պատկանած կուսակցութեան կանոնադիրն ալ կը պահանջէ՞ իր այդ յանձնառութիւնը առաւելագոյն չափով կատարել կարենալու համար: Երիտասարդ նորընծան, կուսակցութեան շարքերը մտնելու պահուն կը գիտակցի՞ թէ ի՛նչ առարկայական կամ ենթակայական ազդակներ վաղը կրնան իրեն արգելք հանդիսանալ, որ յաջողի հաւատարիմ մնալ իր երդման ու իր խօսքին համապատասխան գործ տեսնէ, այլ խօսքով իր տուած խոստումին համապատասխան կեանք ապրի:

Կը մտածէ՞ արդեօք, օրինակի համար, որ բնակավայրն ու բնակարանը ընտրած ատեն մնայ իր կուսակցութեան միաւորին՝ խումբին կամ ընդհանուր ժողովին հաւաքատեղիէն ոչ շատ մեծ հեռաւորութեան վրայ, որպէսզի առանց դժուարութեան ու ժամավաճառութեան մասնակցի աշխատանքներուն, թէկուզ աւելի հեռու պիտի կարենար աւելի մեծ ու աւելի յարմար գինով տուն գտնել, կամ պիտի յաջողի՞ դիմադրել աւելի մեծ շահոյթի հրապոյրին՝ հայաշատ քաղաքներէ հեռու վայրերու մէջ, չզրկուելու համար իր հարազատ շրջապատէն, ընկերներէն, հասարակական գործունէութիւնէն:

Միեւնոյն այդ այնքան առարկայական թուող ազդակը՝ բարձր եկամուտի ձգտումը, որ անկասկած ունի իր ենթակայական արմատներն ալ, զինք հեռաստանները տանելով, պատճառ չի՞ կրնար դառնալ հետագային, որ իր գաւակները զրկուին հայկական վարժարան յաճախելէ, հայեցի ուսում ստանալէ, ընկերական հայ շրջանակ ունենալէ: Հարց չտա՞նք այն ատեն, թէ Հայ դատին նուիրուելու այդ ի՞նչ յանձնառութեան մասին է խօսքը, երբ ձեռքիդ ջահը յաջորդ սերունդիդ փոխանցել անգամ պիտի չկարենաս...

Ողբերգութիւն չէ՞՞ ասիկա:

Բայց միայն նման ֆիզիքական, առարկայական պատճառներ չեն, որ կ'արգելին մեզի, որ մեր խօսքին յարիր մնանք, մեր խոստումը չզրոյթենք: Ենթակայական ի՛նչ-ի՛նչ պատճառներ ալ կրնան խանգարիչ ազդակ հանդիսանալ— անձնական նախասիրութիւններ, վիրավորանքներ, փառասիրութիւններ, նախանձներ, նախապաշարուածներ եւ մասամբ նորին— ու մղել, որ հրաժարինք կուսակցութիւնէն, քաղաքէն քաղաքական կեանքին մասնակցութիւնէ, մեր գաւակները չուղարկենք հայ դպրոց կամ թերաւարտ հաննք անկէ, մեր կապերը խզենք հայութեան հետ: Իսկ երդո՞ւմը...


Այս ըսուածները չեն վերաբերի միայն կուսակցականներու: Միութիւններու անդամներն ու պարզ ազգայիններն ալ կրնան նման վիճակներու մէջ գտնուիլ, նման թակարդներու մէջ իյնալ, նման սայթաքումներու ենթարկուիլ...

Հարցը ա՛լ աւելի խնդրայարոյց ու անընդունելի կը դառնայ, երբ առաջնորդող կամ ղեկավար դիրքերու վրայ գտնուող անձեր՝ ուսուցիչներ, եկեղեցականներ, գրողներ ու մտաւորականներ կամ վարչականներ ըլլան սայթաքողները:

Գալով պետական այրերուն, որոնց ապրած կեանքը խոշորացոյցի տակ կ'ըլլայ, քանի որ առաջին հերթին իրենք օրինակ պիտի հանդիսանան պարզ քաղաքացիներուն, մանաւանդ՝ իրենց ի նպաստ քուէարկած քաղաքացիներուն, անոնք ալ առաւել ուշադիր պիտի ըլլան իրենց վարքուբարքին, հաւաքականութեան շահը անձնական շահէն առաջ դնելով, այլեւ ոչ մէկ անձնական շահ հետապնդելով, մաքուր պահելով իրենց բարոյական դիմագիծը ու անպախարակելի՝ իրենց արարքները: Եւ մենք կը տեսնենք այսօր, թէ որքա՛ն դժուար է չսայթաքիլ, ատիկա ըլլայ հայկական թէ ոչ հայկական բարձրագոյն մակարդակներու վրայ:

Սակայն խօսքին ու գործին միջեւ անհետեւողականութիւնը կրնայ իր գլուխը ցցել մեր կեանքի շատ աւելի առտնին ոլորտներու մէջ: Ինքզինքն ամուր հայ նկատող, հայութեան շահերը միշտ բարձր դաւանող, Ապրիլ 24-ի ալ բողոքի ցոյցերուն մասնակցող մեր այնքան սիրելի հայրենակիցները նախանձախնդիր են, որ շուկայէն «եալանջի» տղմա, չոր թուզ կամ ծիրան գնած պահուն ստուգեն, որ յանկարծ չըլլայ, թէ մեր դարաւոր թշնամիին տնտեսութեան բարգաւաճման նպաստեն, ու մնան հետեւողական...

ՎԻԵՏ-ԱՐՄԷՆ



**Այցելեցե՛ք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցոյ Կիրակօրեայ դպրոցի կայքէջը՝**  
**www.sourphagop.org**

**«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝**

Շաբաթ - 08:30 (առաջին սիտու) եւ 1:30am  
 Կիրակի - 3:30pm  
 Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am  
 Երեքշաբթի - 12:00pm  
 Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm  
 Հինգշաբթի - 12:30pm, 12:30am  
 Ուրբաթ - 3pm  
 Ուղիղ արձակում՝ [www.icitelevision.ca](http://www.icitelevision.ca)

**Videotron:**  
 HD616 կամ SD16

**Bell Fibe:**  
 HD1216 կամ SD216

## Հայոց ցեղասպանութեան 102-ամեակի ձեռնարկը Համիլթոնի մէջ

Հայոց ցեղասպանութեան նուիրուած ձեռնարկ մը տեղի ունեցաւ Համիլթոնի մէջ 23 Ապրիլ 2017-ին, կազմակերպութեամբ ՀՅԴ «Վուսեան» կոմիտէի կողմէն Հայ Դատի յանձնախումբին, Հայաստանեայց Առաքելական Ս. Մարիամ եկեղեցւոյ եւ Մ. Բաբայանի Հայ Ուսանողական միութեան:

Ոգեկոչուածը սկսաւ Ս. Մարիամ եկեղեցւոյ մէջ մասնաւոր պատարագով եւ մէկուկէս միլիոն սրբացած նահատակներու յատուկ յիշատակումով, որուն աւարտին ժողովուրդը մեկնեցաւ Հայ կեդրոն, ուր պատշաճ հիւրասիրութեան հետք, ժամը 2:00-ին տեղի ունեցաւ ձեռնարկը, ներկայութեամբ քաղաքական եւ պաշտօնական հիւրերու:

Ձահավառութեան եւ քայլերգներու երգեցողութեան հետք, հանդիսավարներ Առաքել Մինասեան (անգլերէնով) եւ Կարին Եղիազարեան (հայերէնով) իրենց բացման խօսքերով հակիրճ կերպով փոխանցեցին օրուան պատգամը եւ յարգաբարբեմ հրաւիրեցին քաղաքական հիւրերը, որոնք բոլորն ալ շեշտեցին կարեւորութիւնը նման ձեռնարկներով վառ պահելու յիշատակը մեր գոհերուն եւ յիշեցնելու ամբողջ աշխարհին գործուած ոճիրը: Հիւրերու կարգին էին Պապ



Պրաթինա (MP), Մարիա Բիրսըն, Թօմ Ճաքսըն (Councillors), Նէյթըն (Conservative party of Canada), որ կը ներկայացնէր կուսակցապետ Ռոնա Ամպրօզը:

Խօսքերէն հետք՝ Վարսենիկ Փափագեան հանգէս եկաւ մենեղակով

«Կուունկ»ը, ապա Գարօլին եւ Հիլտա Նալպանտեաններ ջութակով ու քանոնով մեկնաբանեցին «Տէչ համան» եւ «Պիտի պաշտպանեմ» երգերը:

Օրուան բանախօսն էր ընկերուհի Քաթիա Տէր Յովակիմեան, որ փոխանցեց օրուան հրամայականը՝ շեշտելով ուրացութեան դէմ պայքարին կարեւորութիւնը:

Բանախօսէն հետք, բեմ բարձրացաւ Գոհար Վարդանեան, որ Պարոյր Սեւակի «Անլուելի Զանգակատուն»էն «Ղօղանջ նախճիրի» հատուածի անգլագական ասմունքով սահմակեցուց ներկաները:

Գոհարին յաջորդեց Լորա Պարսուսեան, որ արտասանեց «Հայ եմ» եւ մենեղակով «Ատանայի ողբը»:

Յանդիսավարներուն փակման խօսքերով ու Ս. Մարիամ եկեղեցւոյ հովիւի «Պահպանիչ»ով աւարտին հասաւ յուշատօնը:

## Ապրիլ 24-եան այց Կոմիտասին

Աւանդութիւն դարձած է այլեւս Քեպէպի հայ համայնքին համար հաւաքուելի Կոմիտասի կիսանդրին շուրջ եւ անոր ընդմէջէն ողջագուրել նահատակները մեր ցեղասպանութեան... Քաղաքիս Միծեռնակաբերդն է ան, ուր ամէն Ապրիլ 24-ին կ'ուղղուինք ծաղկեփունջերով եւ գերթ մի խորանի առաջ՝ մոմավառութեամբ, աղօթքներով ու ազգային երգերով կը յարգենք յիշատակը մեր մէկուկէս միլիոն գոհերուն:

Տարբեր չէր կրնար ըլլալ նաեւ այս տարի, երբ դարձեալ ներկայ եղանք՝ վերանորոգելու համար ուխտը մեր, շարունակելու մեր հանապազօրեայ պայքարը՝ մինչեւ յաղթանակ, հակառակ բոլոր դժուարին խոչընդոտներուն:

Չէ՞ որ Սեւակի բառերով կ'ըսենք.

«Կա՛նք, պիտի լինենք ու դեռ շատանանք»:



Սեդա Թէլեան



# Հորիզոն

ՇԱՐԱԹԱՔՆԵՐԹ

## Օգոստոս 25 - Սեպտեմբեր 8

Միացէ՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը:

Տեսարժան վայրերուն մէջ ընդգրկուած են.  
Դադիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք...  
Խրախճանք Դիլիջանի անտառներուն մէջ եւ Արցախի հայկական գիւղերուն մէջ:  
Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$34500.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy  
Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ համերգներու, պտոյտներու (Տաթեի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երեւանի Հանրապետութեան հրապարակ քաղաքով 2 վայրկեան է՝ [www.hotelaviatrans.am](http://www.hotelaviatrans.am)

Արձանագրուելու համար հեռաձայնէլ 514 332-3757 թիւին:

## Հայոց ցեղասպանութեան ոգեկոչումը Գեմպրիճի մէջ



Կիրակի, 23 Ապրիլ 2017-ին Ս. Նշան եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յատուկ յիշատակման պատարագ Հայոց ցեղասպանութեան զոհերուն ի յիշատակ, մասնակցութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հայր Յովհաննէս Սաղարճեանի եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ Վերապատուելի Յովհաննէս Սարմազեանի, որմէ ետք թափօրը ուղղուեցաւ դէպի Յուշարձան, ուր տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն:

Ապա ժամը երկուքին Հայ կեդրոնի սրահին մէջ պաշտօնական ձեռնարկին

բացումը կատարեց Տաթև Գուլումճեան, որմէ ետք բեմ բարձրացան ՀՕՄ-ի Շաբաթօրեայ վարժարանի աշակերտները, որոնք երգեցին Գանատայի եւ Հայաստանի քայլերգները:

Ձեռնարկի հանդիսավարուհին ներկայացուց օրուան պատգամաբեր համալսարանի դասախօս Dr. Henry Theriault-ը, որ իր խօսքին մէջ նախանդրադարձաւ ցեղասպանութեան պատճառած հայութեան մարդկային եւ նրկական վնասներուն, ապա շեշտեց պահանջատիրութեան եւ հատուցման

կարեւորութիւնը: Ան նշեց նաեւ, որ հայութիւնը այսօր աշխատանք կը տանի այլ ժողովուրդներու հետ, որոնք կրած են նման անիրաւութիւններ, հասցնելու համար հատուցման դատը միջազգային ատեաններ: Անկէ ետք խօսք առին քաղաքական հիւրերէն ոմանք՝ Harwan Tabbara՝ Mp Liberal Kitchener South-Hespeler, Kathryn McGarry՝ Mpp. Cambridge, որոնք կարգացին Գանատայի եւ Օնթարիոյի նահանգի վարչապետներուն խօսքերը այս առթիւ: Իսկ Harold Albrecht՝ Mp Kitchener-Conestoga եւ

Bryan May՝ Mp Cambridge (Պահպանողական եւ Ազատական կուսակցութիւններէն) ներկայ չկրցան ըլլալ, սակայն իրենց խօսքերը փոխանցուեցան տեսերիզով:

Ձեռնարկին ներկայ էին նաեւ Raj Saini՝ Mp Kitchener Centre եւ քաղաքապետարանի ներկայացուցիչներ:

Ոգեկոչումը աւարտեցաւ Հայր Սուրբին արտասանած «Պահպանիչ»ով:

Կարպիս Հանգեթեան

**Հորիզոն** [www.horizonweekly.ca](http://www.horizonweekly.ca)

### «ՎԱՐԴԳԷՍ ԵՒ ԱՍՏՂԻԿ ՍԱՐԱՖԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Վ. եւ Ա. Սարաֆեան Հիմնադրամ»-ի տնօրէնութիւնը 2017-2018 ուսումնական տարեշրջանին համար, կրթաթոշակ պիտի յատկացնէ արժանաւոր ուսանող(ուհի)ներու: Թեկնածուները պարտին նահանգիս համալսարաններէն մէկուն մէջ հետեւիլ նախընտրաբար Մանկավարժութեան, Լրագրութեան, Ընկերային կամ Քաղաքական գիտութեանց ճիւղերուն:

Դիմումագիրը ստանալու համար կապուիլ հիմնադրամի էլ-նամակի հասցէին [fondationsarafian@gmail.com](mailto:fondationsarafian@gmail.com) Դիմումագիրը ամբողջացնելէ եւ պահանջուած փաստաթուղթերը մէկտեղելէ ետք՝ ուղարկել միայն վերեւ նշուած էլ-նամակի հասցէին, որպէս մէկ եւ ամբողջական յաւելում:

ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԺԱՄԿԷՏՆ Է՝ 31 ՅՈՒՆԻՒՄ 2017

2016-2017 տարեշրջանին «Վ. եւ Ա. Սարաֆեան Հիմնադրամ»-ին կատարած յատկացումներն են.

1.Մբ. Էջմիածնի Կաթողիկոսարանի դպրեվանք	\$ 1 000
2.Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի դպրեվանք	\$ 1 000
3.Համալսարանական կրթաթոշակներ	\$ 5 100
4.Մբ. Յակոբ «Վ. եւ Ա. Սարաֆեան» Նախակրթարան եւ «Բաստրմաճեան» Երկրորդական Վարժարան	\$ 27,174
<b>Ընդհանուր գումար</b>	<b>\$ 34,274</b>

### «Հորիզոն» շաբաթաթերթի 2017 թուականի վարժողական ծրագիր

Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական բաժանմունքին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Հորիզոն» շաբաթաթերթը այս տարի կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր:

**Աշխատանքի մանրամասնութիւններ**

- «Հորիզոն»-ի ամենօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս թարգմանութիւններ կատարել, անգլերէն, հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:
- Գաղութային ձեռնարկներու թղթակցութիւններ կատարել:
- Հարցախոյզներ կազմակերպել:
- «Հորիզոն»-ի վարչական աշխատանքներուն օգնել:
- Բաժանորդագրութիւններու գործընթացը հետապնդել:
- Արխիւներ դասաւորել:

**Պայմաններ**

- Թեկնածուն 15-30 տարեկան, երկրորդական վարժարանի, Cegep-ի կամ համալսարանի ուսանող պէտք է ըլլայ:
- Պէտք է լիաժամ ուսանող ըլլայ, որ վարժողական ծրագրէն ետք վերստին իր ուսումը շարունակէ:
- Պէտք է Գանատայի քաղաքացի, մնայուն բնակիչ, կամ Immigration and Refugee Protection Act-ի օրէնքներով սահմանուած ապաստանեալ (Refugee) ըլլայ:
- Պէտք է աշխատելու իրաւունք ունենայ:

**Աշխատանքի տեսողութիւն եւ վարձատրութիւն**

- Վարժողական այս ծրագրի դիմումները կը սկսին Ապրիլ 25-ին: Ծրագիրը կը սկսի Յունիս 19-ին եւ կ'աւարտի Յունիս 28-ին:
- Ծրագրի տեսողութիւնն է 6 շաբաթ, շաբաթական 30 ժամ աշխատանքային ժամով եւ 11.25 տոլար ժամական վարձատրութեամբ:

Ձեր դիմումագրերը ուղարկեցէ՛ք «Հորիզոն»-ի հասցէին մինչեւ Յունիս 8 3401 Olivar-Asselin, Montreal, Quebec, Canada H4J 1L5 Կամ Ե-նամակով ուղարկել «Հորիզոն»-ի վարչական պատասխանատու Սիլվա Էրամճեանի հասցէին՝ [sylva@horizonweekly.ca](mailto:sylva@horizonweekly.ca)

# SPECIAL OFFER! CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!  
A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!

SERVING THE ARMENIAN COMMUNITY SINCE 1984  
Please call Serge Khatchadourian



3815 Victoria Park Ave. (At Gordon Baker)  
Toronto, ON M1W 3Y6

**Gary Chahinian**  
ABR., Broker of Record - Owner  
RE/MAX DIAMOND Realty Inc.  
W torontohomes.ca  
E gary@remaxdiamond.com  
**416-258-8892**

**Noor Fine Food**  
Gourmet Mediterranean Cuisine  
1 High Meadow Place, Unit 9  
Toronto, Ontario M9L 2Z5  
Tel 416 745 3111  
Fax 416 745 9337

**ANI Restaurant**  
905.761.6484  
1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

**Sutton**  
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage  
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0  
**Annie Varbedian**  
Sales Representative  
Direct: (416) 918-3615  
Office: (416) 739-7200  
Fax: (416) 739-9367  
annievarbed@hotmail.com  
www.suttongroupadmiral.com

**hearing aid source**  
Andre Ayvazyan HIS B.A.S.  
andre@HearingAidSource.ca  
416 754 4327 (HEAR)  
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

**Crown Pastries**  
Fine Middle Eastern Pastries  
2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)  
Toronto ON, M1R 2Z5  
Tel 647.351.2015  
www.crownpastriesbaklava.com

**I.D.A.**  
Part of the *Regal* family of pharmacies.  
**Cassandra Pharmacy Inc.**  
2040 Victoria Park Ave.  
Toronto, Ontario  
M1R 1V2  
Pharmacists  
**Sarkis Balian**  
**Vartan Balian**  
**Maral Abdalian Balian**  
Tel. : **416.449.2040**  
Fax: **416.449.2048**

**ANI BAKERY**  
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ  
Middle Eastern Pizza  
Lahmajoun  
ARSEN DABBAGHIAN  
25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C8  
Tel: 416.285.7164

**Linda KHARABOYAN, LL.B., D.D.N.**  
Notaire et conseillère juridique  
Testament  
Mandat  
Procuration  
Financement  
Immobilier  
Attestations  
Consultation personnalisée à domicile  
Տուննրու այցելությունը ըստ փափաքի  
1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9  
T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezlenotaire.ca

**VIZUALIS**  
optométriste  
**DR SHANT DONABEDIAN**  
Centre d'Achat Fairview - Fairview Mall  
Pointe Claire  
514 695 2555 - VIZUALIS.CA

**PHOTO Cristal**  
(514) 744 4313  
Berj Merdjanian  
Mariage - Portrait - Graduation  
Restauration - Commercial - Passeport  
Publicité - Lamination - Encadrement  
Video - Reproduction  
647 Boul. Decarie  
VSL Montreal QC  
H4L 3L3  
photocristal@hotmail.com  
www.photocristal.com

**Assura Bien inc.**  
Cabinet en assurance de dommages et de services financiers  
Ապահովագրական գրասենյակ  
**KRIKOR ABRAKIAN** **VAHAN MATOSSIAN**  
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7  
T: 514.903.3999

**RITA BAGHDASSARIAN**  
Conseillère en Sécurité Financière  
Revenu Garantie Viager  
COMPTÉ D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •  
REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •  
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE  
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT  
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,  
Laval Qc. H7V 1E8  
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262  
ritabagh@yahoo.com

**TAXI MIRABEL**  
450-430-2650  
Taxi Mirabel Հայկական հաստատությունը կարիք ունի  
20 հայ թարսի վարորդի Միրապլ շրջանին մէջ:  
Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:  
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,  
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

**RE/MAX**  
RE/MAX 3000 inc.  
Agence immobilière  
**Elie Berberian**  
Courtier immobilier / Real Estate Broker  
C 514.519.3543  
B 514.333.3000

**ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN**  
POSE D'ONGLES  
RÉSINE ET POUVRE  
MANICURE & PÉDICURE AVEC GEL  
RECOURVEMENT SUR ONGLES NATURELS  
Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝  
514 941-0014 LAVAL

**KRIKOR MAROUNIAN RLU**  
Independent Financial Security Broker  
Life Insurance • Disability & Critical Illness Insurance  
Group Insurance • Pension Plans  
Travel/Visitor Medical Insurance  
11820 General Giraud  
Montreal, QC H4J 2H6  
Res: (514) 332-7021  
Fax: (514) 332-7376  
Cell: (514) 927-2666  
krikormar@gmail.com

**FIVE STAR ELECTRIQUE**  
CINQ ÉTOILES  
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING  
RESIDENTIAL-COMMERCIAL  
**BEDROS NALPATIAN**  
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.  
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997  
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

**CENTUM**  
Metrocap Wealth Solutions Inc.  
License # 12147  
Mortgage programs for new comers to Canada  
New purchases  
Refinancing  
Second mortgages  
Self employed  
Low credit score  
Access to top lenders including private lenders  
416.662.6650 cell  
centum.ca/sosie\_derneressian

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE - NOTARY  
180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5  
T 514.382.7222  
F 514.381.1818  
aline.b@notarius.net  
www.abnotaires.com  
Նոտար եւ հրապարակական խորհրդատու՝ Ալին Բեքերեճյան

ՄՈՆՈՐԷԱԼ

Հայագիտական Լսարան: Կազմակերպութեամբ՝ Համագայինի Գ-նատայի Ծրջանային վարչութեան, Գիւթ՝ Ցեղի գաղափարը եւ ամերիկահայ գաղթականութիւնը: Ծարաթ 6 եւ Կիրակի 7 Մայիս 2017:

Համագայինի «Մուշեղ Իշխան» գրադարանը խիստ կարիքը ունի կամուրջ մարդուծի: Կը խնդրենք, որ հետաքրքրուողները հեռաձայնով կապ պահեն գրադարանի անձնակազմին հետ, երբեք քիչ եւ Հինգշաբթի օրերը կ.ե. ժամը 1:00-5:00, իսկ Կիրակի օրերը առաւօտեան ժամը 11:00-էն կ.ե. ժամը 2:00: Հեռաձայնի թիւ՝ 514 337-7753:

Fort Lauderdale, FL - Armenian Heritage Cruise XXI 2018 January 20-28, 2018 - Eastern Caribbean Cruise aboard the Royal Caribbean's Freedom Of The Seas, Travelling to: St. Kitts / St. Johns, Antigua / San Juan / Labadee, Private Island. Cabin Rates starting from US \$919 / person based on Double Occupancy, including Port Charges and ACAA registration fee. Government taxes of \$108.36 are additional. Armenian Entertainment, Armenian Cultural Presentations, Armenian Festival Day, Tavlou & Belote Tournaments and much more. Call TRAVELGROUP INTERNATIONAL @1-561-447-0750 or 1-866-447-0750 Ext. 108. Ask for Janie.

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«ՀՈՐԻԶՈՆ» որեւէ ձեւով եւ որեւէ ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան: «ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որեւէ ծանուցում կամ յայտարարութիւն: ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ Կ'ընդունին միայն գրաւոր, որոնք խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազն 7 օր առաջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«Հորիզոն»ի յղուած թղթակցութիւններն ու յղուածները պէտք է գրուած ըլլան ընթերցելի ձեւով, անհամապատասխան ձեւով կամ անհամապատասխան ձեւով չընթերցելի ձեւով: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները մկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնուած միւթերը հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր: Հրատարակուած յղուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմանօրէն չեն ներկայացնել խմբագրութեան տեսակետը: Ցապաղած թղթակցութիւնները չեն հրատարակուիր: Բոլոր թղթակցութիւնները ենթակայ են խմբագրման եւ վերամշակման: Ստացուած յղուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ-ի Տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ՝ Հինգշաբթի, 11 Մայիս 2017-ին:

ՀՄԸՄ Կամֆ մասնաճիւղի անդամական տարեկան ընդհանուր ժողով - Գ. Գիստ՝ Չորեքշաբթի, 10 Մայիս 2017-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, «Ա. Ա. Կարոնեան» սրահին մէջ:

ՀՄ-ի ՄՈՆՈՐԷԱԼԻ «ՍՕՍԷ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 2 Մայիս 2017-ին: Երեկոյեան ժամը 7:00-7:30՝ հիւրասիրութիւն, 7:30-ին՝ ժողով:

ՀՄ-ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Չորեքշաբթի, 3 Մայիս 2017-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Լաւալի Հայ կեդրոն:

ՀՄ-ի ԹՈՐՈՆՏՈՅԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 2 Մայիս 2017-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Հայ կեդրոն:

ՀՕՍ-ի Սոնթրէալի Սօսէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն հինգշաբթի ժամը 12:00-էն 4:00: Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:

Voyages HAIG Travel. Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676. ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ... ԼԱԻԱԿՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԿՈՅՆ ԳԻՆԵՐ. PERMIS DE QUÉBEC. 3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

ՀՕՍ-ի Սոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն: ՀՕՍ-ի Սոնթրէալի Ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Սոնթրէալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունեութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն: - Կ'օգնենք դիւրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը: - Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants: - Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէտի դասընթացներու: - Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ: - Նոր ժամանած եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր: - La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ գեղջուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն: Գինգշաբթի օրերը ժամը 12:00էն - 4:00 Գաղթ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5 Գեղջուածայն՝ 514 514-335-2222

ALINE BEKEREJIAN NOTAIRE • NOTARY. ՆՈՏԱՐ Ալին Դեքերեճեան: Achat, Hypothèque, Refinancement, Mandat, Testament, Succession, Mariage, Procuration. Մտնտուր, Անշարժ Կալուածք, Վերաֆինանսաւորում, Պատուէր, Կտակ, Կայրածք, Ամուսնութիւն, Փոխանորդագիր. Purchase, Mortgage, Refinance, Mandate, Will, Estate, Marriage, Power of Attorney. 180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5. T 514.382.7222 F 514.381.1818. aline.b@notarius.net www.abnotaires.com. Շառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Գայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

horizon HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly. Abonnement annuel / Yearly subscription Canada. Administration / Publicité Sylva Ehramdjian-Bachekjian (General Manager). Վարիչ Խմբագիր՝ Վահագն Գարապաշեան Վարչական պատասխանատու՝ Սիլվա Պաշեգճեան Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան Աագ Խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արքիմեան Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան Չեւատրում՝ Նէնսի Կիրակոսեան Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան Սոնա Թիթիզեան-Կէտիկեան: Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝ Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921 Ժագ Վարպետեան, (416) 722-9225. Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէկիմէնթաշ,

Financé par le gouvernement du Canada. Funded by the Government of Canada. Canada

# ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



**ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ) - Այնքան հաւասարակշռուած է վերաբերմունքը, որ գործատիրոջը ուշադրութիւնը կը գրաւէ, ան մեծապէս կը վստահի քեզի: Օգտուէ՛ այս առիթէն եւ ամսականի յաւելում պահանջէ, ան-միջապէս պիտի ընդառայէ, որովհետեւ գոհ է քեզ-մէ:

**ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս) - Աւելորդ ինքնավստահութիւն մը կը տիրէ տրամադ-րութեանդ այս շաբաթ, շուրջիններդ ալ կը նկատեն այս մէկը , սակայն կը փորձեն հասկացողութեամբ վերաբերիլ, փոխէ՛ այս ըն-թացքը, այլապէս պիտի կորսնցնես սրտակից բա-րեկամներդ:

**ԵՐԿՈՒՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) - Կը փորձես քանի մը գործ միեւնոյն ժամանակ ընել, այս մէկը կը ջլատէ քեզ, հակառակ որ դուն ոչ մէկ տկարութիւն կը զգաս հիմա-կուհիմա, սակայն եթէ այսպէս շարունակես յան-կարծ անախորժելի անակնկալներու դէմ յանդի-ման պիտի գտնուիս:

**ԽԵՅՊԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) - Հոգ տար առողջութեանդ այս շաբաթ, թշնա-միներով շրջապատուած ես, նախանձուտ մարդիկ գիշեր-ցերեկ կը հետապնդեն լու-րերդ, այս մէկը կը մտատանջէ քեզ, այդ պատճա-ռով ալ կրնաս հիւանդանալ, հետեւաբար զգոյշ եղիր:

**ԱՌԻԾ** (24 Յունիսէն 23 Օգոստոս) - Անոզ վերաբերմունք ունիս առողջութեանդ նկատմամբ, այս մէկը կը վնասէ քեզի, հոգ տար ուտելիքներուդ, սննդարար ճաշատե-սակներով մտուիր այս շրջանին, որովհետեւ բաւա-կան ճնշուածութիւն կ'ապրիս գործիդ մէջ:

**ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Մի՛ փորձեր կարծիքդ պարտադրել շուրջիննե-րուդ, պարտաւոր ես յարգել իրենց կարծիք-ները եւս, միշտ չէ, որ քու մտածածդ ճիշդ է, համբերող եւ լսող եղիր, շատախօսութենէ հեռա-ցիր այս շրջանին, որպէսզի անիմաստ զրոյցներու չբռնուիս:

**ԿՇԻՈՔ** (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Նոր գաղափարներդ եւ առաջարկներդ յայտնելու մի՛ վարանիր, գործընկերներդ եւ գործատերդ հասկացողութիւն պիտի ցու-ցաբերեն անոնց հանդէպ եւ բաւական ուրախ պի-տի ըլլան այս փոփոխութիւններով եւ նորութիւննե-րով:

**ԿԱՐԻԾ** (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Ինքզինքդ վտանգի կ'ենթարկես այս շրջանին, կ'ուզես նպատակիդ հասնիլ ամէն գնով, բայց անբարեկամաստ պայ-մանները շղային դարձուցած են քեզ, այդ պատճա-ռով ալ ժխտական եւ յարձակողական եղած է վերաբերմունքդ շուրջիններուդ հետ:

**ԱՐԵՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմ-բեր) - Այս շրջանին աւելի զօրաւոր կը զգաս ինքզինքդ, սովորականէն շատ աւելի բարձր է ներուժդ մանաւանդ այս շաբաթ, հետեւաբար օգտուիր այս առիթէն եւ իրագործէ այն ինչ որ կը հետաձգէիր յաճախ: Բարեբեր շաբաթ մըն է:

**ԱՅԾԵՂՁԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յուն-ուար) - Մարմնական կարողութիւններդ բաւական բարձր են այս շաբաթ, այդ պատճառով ալ գործերդ շատ լաւ կ'ընթա-նան, միեւնոյն ժամանակ ինքզինք փաստե-լու պահանջը կը զգաս ամէն վայրկեան, պետք չու-նիս ինքզինքդ չարչիկելու այդքան:

**ՃՈՎԱՆՈՅՅ** (21 Յունուարէն 19 Փետր-ուար) - Գործընկերներդ եւ գործատերդ շատ գոհ են քեզմէ այս շրջանին: Միշտ մէջտեղերն են եւ բոլոր հարցներուն դրա-կան ներդրում կ'ունենաս: Սակայն այս բո-լորը շուրջիններուդ նախանձը կը շարժէ, զգոյշ ըլ-լալու ես անոնց նկատմամբ:

**ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) - Այս շա-բաթ աստղերը քեզի պիտի պարգեւեն հա-ւասարակշռուածութիւն եւ աշխուժութիւն: Այս մէկը պիտի սատարէ քու ծրագիրնե-րուդ իրագործման: Դիւանագիտական յա-րաբերութիւններդ բաւական յաջող կ'ընթանան այս շրջանին:

To Horizon Weekly  
For the birth of their first child  
George  
Dimos Papadimitrios and Tamar  
Bouchalian 100

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԹՈՐՈՆԹՕ**  
Աւետիսեան-Մելքոնեան Մարալի 2-րդ տարեկիցին  
Տիկ. Ազատուհի Մելքոնեան 150  
Մայք եւ Սիլվա Պողոսեան 50  
Արսէն Մելքոնեան 50  
Պէհլեանեան Ազնիւի 40-քին  
Պարզեւ եւ Պերճուհի Տուգանեան 20  
Համայն Ռուսապետեան զերգաս-տանի ննջեցեալներու հոգիներուն  
Անի Ռուսապետեան 100  
Աւագեան Գրիգորի, Անի-ի եւ Հովհաննէս-ի հոգիներուն  
Վրէժ եւ Արփի Աւագեան 25  
Գալստեան Նշանի եւ Արթիւրի Ա. տարեկիցին  
Յովիկ եւ Նարինէ Պոյաճեան 100

Յարութիւնեան Վահագի 40-քին  
Յարութիւնեան ընտանիք 50  
Մաղաքեան Ռաչիկի 40-քին  
Նուարդ Քարկոցեան 20  
Մոսիկ եւ Ռիթա Քարկոցեան 20  
Էջմեան Ժազարի 2-րդ տարեկիցին  
Ժիրայր Էջմեան 30  
Յարութի եւ Մարլէն Պապոյեան 20  
Պաշտեան-Տիգրան Լուսինի 40-քին  
Տէր եւ Տիկ. Գրիգոր Պաշտեան 20  
Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Պաշտեան 20

Երուանդ եւ Մանուշակ Տապալադ-եան 50  
Կարպիս Չաքուհեանի մահուան առիթով  
Արտավազ եւ Սոնիա Մուրատեան 100  
Մարի Մաքսուտեան 50  
Ռաչիկ եւ Այտա Գանձապետեան 50  
Գրոյ Հաննիկեան 30  
Շիրակ եւ Անի Նաճարեան 40  
Վահան եւ ընտանիք 50

Յովհաննէս եւ Լենա Գրիգորեան 50  
Ժագ եւ Փանելա Սապունճի 100  
Հրայր Գրիգոր 50  
Անի Նազարեան 100  
Վահէ եւ Մանուշակ Յակոբեան 30  
Վարուժ եւ Քնար Նանօրեան 30  
Վարդան եւ Զարուկ Պուտապետեան 50  
Մարտիկ եւ Սեան Մնացականեան 30  
Հրանդ եւ Մարի Եղապետեան 20  
Չատուրեան եւ Անդրեան ընտանիք-ներ 20  
Փոյ եւ Յովիկ Թոնամեան 20  
Անի Չաքուհեան 50  
Պերճ եւ Յամիկ Պրըզաբեան 25  
Անտրոն եւ Լիան Ֆարիտանի 100  
Լոյիթա Նոնեան եւ ընտանիք 50  
Աբրահամ եւ Օսիկ Մխարթիսեան 50  
Ժագ Վարպետեան 50  
Երուանդ Պողոսեան 20  
Գէորդ Քէշիշեան 20  
Յակոբ եւ Արաքսի Գրիգորեան 100  
Կրկիկ Վարպետեան եւ ընտանիք 100  
Սոնիկ եւ Ռաֆֆի Շահինեաններ 100  
Տէր եւ Տիկ. Տիգրան Զարչափեան 100  
Նորման ճորճ 50  
Տիգրան եւ Մարի Շմունեան 30  
Միհրան եւ Սիրվարդ Մուրատեան 100  
Մկրտիչ եւ Սիլվա Մուրատեան 100  
Նազարեան ընտանիք 140 ամ  
Սարգիս եւ Սիրվարդ Գուրումեան 50

Յովսէփ եւ Լուսին Գաղանճեան 50  
Ռօզիթ Քէշիշեանի մահուան առի-թով  
Արզար եւ Սոնա Միրաբեան 30  
Արշո Զաքարեան 50  
Յակոբ եւ Ժիլիկէթ Ճանապետեան 50  
Լեւոն եւ Անի Հասարճեան 50  
Վաչէ եւ Թայիս Գուրգեան 50  
Քամիլ Տիպա 20  
Միլէյ Բորտուհի 100  
ճորճ Տէր 20  
Սարգիս եւ Թէլուսիթա Քէօսէյեան

40  
Մարի Աննար 20  
Գէորդ եւ Մէրի Սագարեան 25  
Ժան եւ Սոնար Հալլաճեան 20  
Համադ եւ Արեւ Թաշճեան 20  
Վրէժ Գասամանեան եւ ընտանիք 40  
Յակոբ Գասամանեան եւ ընտանիք 30  
Եուսէֆ Տալի 20  
Մուրէն Քէշիշեան 20  
Մուշեղ եւ Վարդուկ Գարազաշեան 25  
Մարոն Հատատ 40  
Գառնիկ եւ Հուրի Նազարէթեան 20  
Կարապետ Ակիսեան եւ ընտանիք 30  
Սոնիա եւ Շաքրը Իսհակ 20  
Քէմիլ Տալլը 20  
Լորիկ Գալթրեան եւ ընտանիք 20  
Արթո եւ Արփի Գասապեան 50  
Էլիսա եւ ընտանիք 100  
Սարգիսեան Սողոմոն 25  
Համիկ Մինասեանի մահուան առիթով  
Արիս Մինասեան 1000  
Փաթրիկ եւ Նաթալա Պաքոս 30  
Վրէժ Նազարեան եւ ընտանիք 100  
Յակոբ եւ Սթիլա Մայտոսեան 25  
Յասմիկ Գուրումեանի մահուան առիթով  
Տիգրանի Պէտրեան 30  
Տիգրան եւ Թագուհի Թոնուկեան 50  
Գրիգոր եւ Աշիկէ Ճանկոցեան 30  
Ազնի Ռանապետեան 25  
Տիգրան եւ Սարի Թորթաթեան 45  
Անի Ռուսապետեան 50  
Պաշիկ եւ Այտա Գանձապետեան 50  
Վրէժ եւ Գարո Ռանապետեան 50  
Յարութիւն Արոյեան 20  
Ժան Չիլեան 50  
Ժան եւ Ճիլիկ Մոճեան 30  
Պաշիկ եւ Արշո Սաղբեան 20  
Հիտա Գաղուս 50  
Օրօր Ուրփայեան 25  
Երուանդ եւ Նայիրի Շահինեան 100  
Յակոբ եւ Սոնա Միրաբեան 30  
Յակոբ եւ Ռիթա Մրապեան 20  
Սանա Նէճմի 20  
Աբրահամ եւ Օսիկ Մխարթիսե-ան 50

Երուանդ եւ Մանուշակ Տապալադ-եան 50  
Յակոբ եւ Տիգրի Մղոտեան 50  
Հայկ Թոնասեան եւ ընտանիք 50  
Ազատ եւ Արմիկ Սաֆարեան 25  
Մեղիկեան Վարդուկի  
Յարութի եւ Սեդա Գասապեան 30  
Ազատ եւ Արմիկ Սաֆարեան 20  
Ժիլիկէթ Սարգիսեան 20  
Սոսիկ Լուսարարեան 20  
Հրանդ եւ Լուսին Պապալեան 100  
Լենա եւ Հայկուհի Չաքուհեան 60  
Գեղուհի Սարգիսեան 20  
Լուսին Պոնճալեան 20  
Աննա Տարազճեան 40  
Եփրատուհի Ստեփանեան 20  
Մարիան Զապար 10  
Գէորդ եւ Մէրի Սագարեան 20  
Ռաֆֆի եւ Նորա Սարգիսեան 100  
Քեփի եւ Անի Արզրեան 100  
Չօրա Կարապետեան 50  
Վարդան եւ Այտա Փրանգեան 30  
Համեստ Տէր Գալթիսեան 20  
Վօլգա Ազրեան 30  
Արաքսի Մարկարոսեան 20  
Անահիտ Օճանի մահուան առիթով  
Նաթալա եւ Հուրի Օճան 75 ամ  
Նուհարատու Քիւնեան Ս. Աստու-ծածին Եկեղեցոյ  
Տոբթ. Սոնիա Աբրահամեան 500  
Օճան եւ Թամար Օճանեան 100  
Թադուհի Քարապետեան 20  
Մարոն եւ Մարիան Զապար 20  
Կարո եւ Սիլվա Սապունճեան 500  
Հայկ Պողոսեան 50  
Նորա Անդրանիկ 100  
Արսէն եւ Մարալ Գալթիշեան 25  
Ալին եւ Անի Ակիսեան 30  
Նուրի Քարոսեան 50  
Սանդուխտ Գալճեան 100  
Մալքը Բէնիսիան 100  
Մարի Թարթարեան 100  
Վարդան եւ Սիրվարդ Վարդանեան 50  
Նայիրի Կրկէս 200  
Վարուժ եւ Սիտոնա Սարգիսեան 100  
ճորճ եւ Մէրի Թոնամեան 60  
Պետրոս եւ Անահիտ Պետրոսեան 50  
Լեւոն եւ Սեան Առաքելեան 100

## ԵՂԵՆ... Սկիզբը էջ 8

(*Խնուս, Տիգրանակերտ, Ծ. Գարահիսար, Մարզուան, նորերը յիշելով*): Երկրորդ հանգրուանն է այս, եւ տա-կաւին չենք գիտեր կուսակցութեան կամքը: Այժմ մենք շուտաւարձ, ելք մը կը փնտռենք: Կատարե՞լ որեւէ ձեռ-նարկ: Բայց ո՞վ կու տայ մեզ այդ իրաւունքը, եւ մա-նաւանդ ո՞վ կընայ կշռել հետեւանքները:

\* \* \*  
Իսկ 11 օգոստոս 1915 թուակիր նամակին մէջ Շա-ւարշ Միսաքեան կը գրէ.  
Կացութիւնը ոչինչով բարւոքած է: Ձերբակա-լումները կը շարունակուին հարիւրներով: Երկէ միայն բռնեցին 500 հոգի: Ճիշդ է որ առ այժմ ընտանիք ու-նեցող զաւառացիները ազատ կը ձգեն, բայց ո՞վ գիտէ: 1300 հոգի քշած են արդէն: Բողոքն ալ կը տանին կոտո-րելու: Չգիտենք, վերջը ի՞նչ փրկուած պիտի ըլլայ: Յօդուածով եւ նամակով քաղուածներ կը ներկայաց-նենք Գոնիայի առաջնորդին նամակէն: Կը տեսնենք որ մերձակալ շրջաններուն համար անգամ ոչ մէկ մեղմա-ցում կայ եւ 75 առ հարիւրը կոտորուած պիտի ըլլայ մինչեւ աքտորավայրը:

Տեղեկութիւններ քաղեցինք Այնթապի տոքթ. Շեփրտէն: Այս միտինարը շատ ալ բարեացակամ չէ հայերու մասին եւ տեղական ապստամբութիւնները կը նկատէ պատճառ՝ այդ դժոխային բարբարոսութեանց, բայց եւ այնպէս իր տեղեկութիւններն անգամ քարերը կը լացնեն: Ահա իր պատմութիւնը:

«Այնթապի տեղահանութեան հրամանը տրուեցաւ նախ յուլիս 21-ին, իր մեկնած օրը, երբ 60 ընտանիքներ պիտի քշուէին: Երկրորդ հրամանը տրուեցաւ քանի մը օր յետոյ, 70 ընտանիքի համար: Յետոյ քշուեցան 1500 հոգի եւ ճիշդ յաջորդ օրը՝ հազար հոգի, որով պարպ-ուած կ'ըլլար Այնթապի փոքրամիւս հայութիւնը. բոլոր ջանքերը՝ ամբիկեան հաստատութիւնները այս կար-գաբուութեան զերծ պահելու՝ մնացին ապարդիւն: Քշուողները ազատ չեն իրեն հետ վերցնելու ուզածին. կրնային ունենալ միայն մէկ անասուն, իւրաքանչիւր ընտանիքի պէտքերը բեռնակու համար:

Աքտորակներու առաջին հանգրուանը կը կազ-մէր Հայէպ, ուր իր անցած ատեն կային 1500 հայեր, դէպի ներսերը քշուելու համար: Դիմադրութեան շատ քիչ փորձեր եղած են. միայն Մարաշի մօտերը, Ամանոս լեռներու մէջ Յընտըճաք հայ գիւղը սպաննած էր տե-ղահանութեան համար զրկուած ժամտարմը, որու հետե-ւանքով երեք ջոկատ զօրք զրկուեցաւ եւ գիւղը գերեզ-մանի ու մոխրակոյտի վերածուեցաւ: Չէյթուցիները քանի մը անգամ յաջող փորձեր ըրին աքտորակներու կարաւաններ կեցնելու եւ ազատելու: Կրկիկոյ շրջանի տեղահանումը կը կատարուի համեմատաբար աւելի լաւ պայմաններու մէջ: Անշուշտ բոլոր քշուածները կը կո-ղոպուին ապստակներու կողմէ, բայց առեւանգումներ

եւ սպանութիւններ այնքան խոշոր տոկոս մը չեն կազ-մեր, որքան բուն իսկ հայկական նահանգներու մէջ: Այն սակաւամիւս մնացորդները որոնք կը վերապրին այդ տաժանելի ճամբորդութեանէն, ցանուցիւր կը տեղաւոր-ուին թուրք եւ արաբ գիւղերու մէջ: Մեծազոյն տոկոսը չտեսաւ Տէր Չօր, ուր 15000-է աւելի հայեր արդէն հա-սած էին: Իսկ ատկէ սկսելով մինչեւ վարը, ձէրապլուս, Սասրլան եւ այլն. ցամաք ու անապատ տեղեր, ցանցն-ուած են ամէն կողմէ՝ քշուած հայերով: Ճամբան մինչեւ Պոլիս հասնիլը, ամէն քաղաքէ հայեր կամ արդէն տե-ղահան եղած, կամ ըլլալու վրայ են:

\* \* \*  
«Մեծ ճգնաժամը» բաժինը կ'ընդգրկէ Շաւարշ Միսաքեանի յօդուածաշարքը, որ լոյս տեսած է Սոֆիայի «Հայաստան» թերթի 1915-ի մայիս 13-սեպտեմբեր 19-ի համարներուն մէջ:

Միսաքեան կը գրէ.  
Ամէն կողմ, ուր հայ համախմբում մը կայ, կառա-վարութիւններ կը գործէ երկաթեայ թաթերով, լարած ու պրկած արեւելեան գազանութեան բոլոր միջոցները: Միստեմաթիկ ծրագիր մը կայ, որ աստիճանաբար եւ անողորմաբար կը գործադրուի Իթիթհատի գործակալնե-րուն ձեռքով, գինուորական ճշգրութեամբ: Ահա Կրկիկի-ան՝ իր Չէյթուցիով, Տէօրթեղով, Մարաշով եւ միւս հա-յաշատ կեդրոններով: Արու բնակչութիւնը գինուոր առած են արդէն, այսինքն իբրեւ բանուոր կը տանջեն ճամբաներու շինութեան համար, կիներ եւ աղջիկներ կը մնան անպաշտպան այս ամէն կարգի բռնութեանց հանդէպ:

\* \* \*  
Յիրուցան Միջագետքի ճախճախուտ տափաս-տաններուն մէջ, կամ Գոնիայի եւ Էնկիլիքի խաւարա-կուռ անկիւնները, ենթակայ սեղուկեան մնացորդներու բիւրազան քմահաճոյքներուն, զրկուած իրենց բոլոր ստացուածքներէն, ցնցոտիներով, բոպիկ ոտքերով, թա-փառական գնչուներու պէս կը հիւժեն այժմ Չէյթուցի խորխու լեռնականները՝ իրենց հայրենի կայանը ձգած Սարմանլը անուն վայրագ աշխրէթի մը, որ բացարձակ տէր ու տիրականն է հիմա:

\* \* \*  
«Տերեւները դեղնած յուշտետորէ մը» բաժինին մէջ Շաւարշ Միսաքեան կը պատմէ իր թաքստոցային կեանքին, մատնութեամբ ձեռքակալման, կրած չարչա-րանքներուն, դատավարութեան եւ պատերազմի աւար-տին՝ ազատ արձակման մասին:

«Յաւելուած» բաժինին մէջ ներկայացուած է եզիտ Արշակը եւ անոր կողմէ մատնիչ պուլկար Վլատի-միր Տիմիթրեւիչի ահաբեկումը:



Innovation that excites

# NISSAN MY CHOICE EVENT

RIGHT VEHICLES. RIGHT PRICE. RIGHT TIME.



CHOOSE YOUR OFFER FROM OUR SELECT 2017 MODELS.

GRUPE NISSAN GABRIEL

**\$3,500**  
MY CHOICE BONUS CASH ON OUR VEHICLES\*

OR

**\$4,000**  
CREDIT ON PARTS AND ACCESSORIES†

(\$3,500\* Bonus Cash and \$4,000† Parts and Accessories Credit are available on 2017 Titan models.)

## ROGUE

LEASE FROM **\$254<sup>‡</sup>**/MONTH, WITH \$1,495 DOWN.

THAT'S LIKE PAYING **\$59<sup>‡‡</sup>** /WEEK FOR **39** MONTHS

FOR THE ROGUE S FWD

**20,000 KM ANNUAL ALLOWANCE**  
**\$0.10/KM FOR EXCESS KILOMETRES**

AVAILABLE FEATURE:



SEVEN PASSENGER SEATING



ROGUE SL SHOWN\*

**INCLUDES \$1,500 MY CHOICE BONUS CASH\***

**NISSAN GABRIEL**  
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8  
**514 509-7777** | [nissangabrieljeantalon.com](http://nissangabrieljeantalon.com)

◀ **OPEN SATURDAYS** ▶

**NISSAN GABRIEL**  
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7  
**514 324-7777** | [nissangabrielanjou.com](http://nissangabrielanjou.com)

◀ **OPEN SATURDAYS** ▶

Offers valid from April 1st to May 1st, 2017. For the lease offers below, the first monthly payment is due at lease inception. RDPRM registration fees and lien registering agent's fees (up to \$77 total) are extra and due at time of delivery. The lease offers are based on a maximum of 20,000 km / year (total allowance of 65,000 km / 40,000 for 39 / 24 months) with excess charged at \$0.10 / km. For all offers, freight and PDE charges, air-conditioning surcharge (\$100) where applicable, manufacturer's rebate and dealer participation (where applicable) are included. License, registration, insurance, specific duty on new tires (\$15) and applicable taxes are extra and due at inception. ‡The lease offer including the My Choice Cash Bonus of \$1,500 / \$1,500 / \$1,500 / \$1,500 / \$1,500 / \$1,500 / \$3,500 / \$3,500 on the following 2017 new models: Rogue S FWD / Rogue SL shown / Murano S FWD / Murano Platinum shown / Pathfinder S 4x2 / Pathfinder Platinum shown / Titan S / Titan Pro-4X shown is for a 39 / 39 / 39 / 39 / 39 / 39 / 24 / 24 month term, which equals 39 / 39 / 39 / 39 / 39 / 39 / 24 / 24 monthly payments of \$254 / \$447 / \$355 / \$625 / \$387 / \$707 / \$386 / \$827 (with \$1,495 / \$0 / \$1,495 / \$0 / \$1,495 / \$0 / \$1,295 / \$0 down payment) when leased through NCF. ‡‡Payments cannot be made on a weekly basis and are shown for informational purposes only. +My Choice Bonus Cash of \$1,500 / \$1,500 / \$1,500 / \$3,500 will be deducted from the negotiated selling price before taxes and is applicable to customers who purchase, lease or finance any 2017 Rogue / Murano / Pathfinder / Titan. †Nissan Parts and Accessories credit ("credit") is available on select new and previously unregistered 2017 Nissan models purchased/leased/financed and delivered between April 1st and May 1st, 2017. Maximum \$4,000 credit available on 2017 Titan models only, Rogue, Murano and Pathfinder qualifies for a lesser credit amount of \$1,950. Credit consists of a discount that can only be used at the time of initial purchase/lease/finance and applied towards the purchase of Nissan accessories from an authorized dealer. Credit will be deducted from the price of accessories after taxes. Any unused portion of this credit will not be refunded and may not be banked for future use. Customer is responsible for all costs not otherwise covered by credit. Credit has no cash surrender value and cannot be applied to past transactions. The offers are available on approved credit through NCF for a limited time. Models shown are for illustration purposes only. Offers subject to change, continuation or cancellation without notice. Offers have no cash alternative value. Conditions apply. ©2017 Nissan Canada Inc.



BARRY KAREN GARO  
**KAZANDJIAN**

12325, Av. Wilfrid-Lazare  
  
 À VENDRE 1 149 000 \$

11933, Boul. Taylor  
  
 À VENDRE 399 000 \$

7171, de Châteaubriand  
  
 À VENDRE 3 950 000 \$

514  
**333-3000**  
 DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

185-190, Deguire  
  
 À VENDRE 550 900 \$

9859, rue Foucher  
  
 À VENDRE 649 000 \$

3900, rue Beaumont  
  
 À VENDRE 424 000 \$

11805, St-Evariste  
  
 À VENDRE 378 000 \$

8300, Gouin O.  
  
 À VENDRE 699 000 \$

12010, Av. Du Beau-Bois  
  
 RÉCEMMENT VENDU

12325, Avenue Wilfrid-Lazare  
  
 À VENDRE 1 149 000 \$

7503-7505, Av. Champagneur  
  
 À VENDRE 629 000 \$

131 Ch. Bates Mont-Royal  
 à partir de 288 2055 +TPS/TVG

12254, rue Valmont  
  
 À VENDRE 314 000 \$

194-196, Boul. Deguire  
  
 À VENDRE 549 000 \$

12280, Orléans  
  
 À VENDRE 1 295 000 \$

Projet immobilier en Arménie, plusieurs modèles de maisons disponibles

11933, Boul. Taylor  
  
 À VENDRE 399 000 \$

1533, Boul. Alexis-Nhon  
  
 À VENDRE 499 000 \$

1042, Mullins  
  
 À VENDRE 249 000 \$

2233-223R, Arthur-Valée  
  
 À VENDRE 899 000 \$

12269, Av. Joseph-Saucier  
  
 RÉCEMMENT VENDU

7801-7805, Av. Stuart  
  
 À VENDRE 449 000 \$

2743, Ernest-Hemingway  
  
 À VENDRE 899 000 \$

12207-12211, boul. Taylor  
  
 À VENDRE 819 000 \$

8, Croix, Mirabel  
  
 À VENDRE 549 000 \$

1189, Ch. Lucerne  
  
 À VENDRE 885 000 \$

**EXPERTISE**

**EXPÉRIENCE**

**EXCELLENCE**

ÉQUIPE KAZANDJIAN .com

CLASSÉS PARI MI LES MEILLEURS COURTIER S RE/MAX AU MONDE  
 RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY .com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5